



# ԱՆԱՀԻՏ

## ՀԱՆՐԻՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԲԵՍԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ 1901 ՅՈՒՆՈՒՍԸ — ՓԵՏՐՈՒՍԸ ԹԻՒ 1, 2

ԲԱՐԻԶ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Եւ այդ կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւրտե- նական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞նէ հոգին չձարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած յժին բնու- թիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

ժ. ՄԻՇԼԷ

# ԲԱՅՈՒԱԾ Է Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Ն Ա Ն Ե Ց Ի Ե Ր Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն Ի Ն

Ա Ն Ա Ն Ե Ց Ի բաժանորդագիւնը կանխիկ է

**Մ**եր բաժանորդներէն շատերը տակաւին չեն վճարած երկրորդ տարուան բաժնեզինը : «Մասիս» լրագիրը ատենով իր առաջին էջին ճակատը սա բաները կը հրատարակէր ամէն օր . «Զրի լրագիր կարգալը գողութիւն է» : Ճաւալի է որ երեսուն տարիէ ի վեր մեր ժողովրդին գրասիրական բարքերը միեւնոյնը մնացած ըլլան : Տարի մը ամբողջ թերթ մը ընդունիլ, վար զնել թիւերը, եւ բաժանորդագին չվճարել, ԳՈՂՈՒԹԻԻՆ է ատ. ուրիշ բառ չկայ այգպիսի այլանդակ վարմունք մը որակելու համար : Անոնք որ չեն ուզեր վճարել, կը խնդրենք ես դարձրնեն Անանիսի թիւերը . անոնք որ կ'ուզեն թերթը շարունակաբար ընդունիլ, պէտք է որ անմիջապէս զրկեն իրենց բաժնեզինը :

## ԲՈՎ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ . ՏԱՐԻ , քիւ 1, քիւ 2

— 0 —

Ի պրոցն ու եկեղեցին , Արշակ Զօպանեան : — Սուլթան Ապրիւլ Համիս Բ . , Ժորժ Տորիս , — Պարսից Շահը եւ Հայերը , Ա . Զօպանեան : — Ունայն կողմը , Բոլ Ատան եւ Չ . : — Աղգային քրոնիկ , (Գ. Լուսինեանի ֆրանսահայ բառարանը , — Պ. Մարիէի բանախօսութիւնը , «Զգացմունք» , — «Շօտիերի պատմութիւն» , — «Գուլթան» , — «Կոչնակ» , — Մամուրեան եւ Տիկին Տիւսաբ , — Մանուէլեանի նոր աշխատութիւնը , — Ստեփան Էլմաս , — Նարեկացիի վրայ յօդուած մը) : — Իրքեր եւ թերթեր , («Լ'Արմենի» , — «Մշակ» , — «Բրօ Արմենիա» եւ հայ մամուլը , — Իժերը , — «Շաւիղ») , Ա . Զօպանեան : — Յոման Փաշա բաղդախնդիրը , Չ . : Զինական հարցը եւ հայկական ջարդերը : — Մեր դրացիները , Գիւրսը , — Լօշտակ , Դէմքեր , Արփիար Արփիարեան , Արշակ Զօպանեան : — Ֆրանսա եւ Հայերը , Ա . Չ . :

# ԱՆԱԾԻՏ

ՀԱՆՐԱՊԵՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒՍԸ 1901

ԹԻԻ 1

## ՊՊՐՈՑՆ ՈՐ ԵԿԵՂԵՅԻՆ

Արտասահմանի թերթերը ծանուցին որ Պ. Մանթաշեան խոստացեր է ստանձնել բոլոր ծախքերը Բարիզի մէջ հայկական եկեղեցիի մը կառուցման: Այդ գաղափարին իրագործումն աւելի դրական փուլի մը մէջ մտած կրնանք ուրեմն համարել: Հարուստներու խումբի մը համաձայնութիւնը բաւական երկայն տեւելու եւ նոյն իսկ բնաւ արդիւնքի չյանգելու վախը կարող էր ներշնչել. երբ միակ անձ մը՝ եւ անսահման հարստութեան տէր եղող անձ մը ինչպէս Պ. Մանթաշեան, յանձն կ'առնէ այդ գործը իր ուրոյն միջոցներովն իրականացնել, շատ աւելի հաւանական կը դառնայ որ Բարիզի Հայութիւնը չուշանայ եկեղեցի մը ունենալու:

Եւ եկեղեցին, այս պայմաններուն մէջ, պիտի անշուշտ ըլլայ այն վայելուչ ու գեղեցիկ շէնքը զոր կը բաղձանք տեսնել Սէնի ամառային վրայ, քանի որ Պ. Մանթաշեան, ինչպէս մեզի կը հաղորդեն, որոշած է շատ խոշոր գումար մը յատկացնել այդ գործին:

Բարիզի մէջ հայկական ոճով սիրուն մատուռի մը կանգնուելը, նախորդ յօդուածովս ըսեր էի արդէն, օգտաւէտ ձեռնարկ մըն է՝ ազգային տեսակէտով. եւ Պ. Մանթաշեան չնորհաւորութեան արժանի է՝ իր ազգին այս ծառայութիւնը մատուցանել յօժարելուն համար: Բայց լսկ մատուռ մը կանգնելով շատանալը, առանց գլխու մարմին մը չիսել ըսել է: Այս մասին տեսութիւններս յայտնելու էի «Անա-

հիտ»ի նախորդ թուով. հիմա որ գաղափարը իրագործուելու մօտ է, առաւել քան երբեք պէտք կը զգամ կրկնելու եւ շեշտելու դիտողութիւնը զոր ներկայացուցեր էի Ազգին արդի բարոյական կացութեանը մէջ, եկեղեցին՝ միս-միսակ՝ ամբողջութիւն մը չի կազմեր: Եկեղեցի մը եւ դպրոց մը, քովէ քով, ահաւասիկ իրական ամբողջութիւնը: Եւ երկուքէն կարեւորագոյնը, — այսօր բոլոր Հայերը համազուած են այս բանին, — դպրոցն է:

Այն սառւար գումարը զոր կ'ըսեն թէ Պ. Մանթաշեան խոստացեր է յատկացնել եկեղեցիի մը կառուցմանը, կրնայ, եթէ ծրարին մէջ մէկ քանի փոփոխութիւններ մտցնեն, բաւել այդ «ամբողջութիւնը» մեզի տալու:

Արդէն, նոյն իսկ եկեղեցիին կառուցումը, այն ձեւով որով մեզի կը հաղորդեն թէ պիտի կատարուի ան, քննադատելի կողմեր ունի: Կ'ըսուի թէ Պ. Մանթաշեան կ'ուզէ որ եկեղեցին անպատճառ Շանգ-էլիզէի թաղին՝ մէջ կառուցուի, եւ թէ փախաք ունի գնել ժանկուտն փողոցը գանուող հող մը որ 3-400,000 Ֆրանք կ'արժէ: Շանգ-էլիզէի թաղին մէջ, որ Բարիզի ամենէն հարուստ թաղն է, անխմաստ է հայկական եկեղեցի մը կառուցանել: Նախ, այդ թաղը շատ հեռու է Բարիզի հայ գաղութին զանազան հատուածներուն բնակած տեղերէն, եւ եկեղեցին անշուշտ պէտք է որ գաղութին համար կառուցուի եւ ոչ թէ Շանգ-էլիզէի օտարազգի միլիոնատէրներուն համար: Յետոյ, 400,000 Ֆրանք արժող հողի մը վրայ քանի մը հարիւր հազար Ֆրանք ալ ծախսելու է որպէս զի տեղին ու հողին արժանի չէնք մը երեւան դայ. ահազին գումար մը պիտի վատ-

նուր ուրեմն. եւ ազգի արգի վիճակին մէջ, ուր ամենակենսական հազարաւոր պահանջքներ առանց նպատի կը մնան, գայթակղեցուցիչ հանգամանք մը կընայ ունենալ այդքան մեծ գումարի մը լոկ եկեղեցի կառուցանելու գաղափարին համար մսխուիլը: Ասոնցմէ զատ պէտք է չմոռնալ որ մեծահարուստ թաղի մը մէջ, շքեղօրէն կառուցուած եկեղեցիի մը պահպանումը տարեկան կըր զումարի մը պէտք ունի. եւ կը տարակուսիմ որ Բարիզի հայ գաղութը կարենայ այդ ծախքերը կանոնաւորապէս հոգալ. իսկ խօսք չկայ թէ Պ. Մանթաշեան որոշած ըլլայ նաեւ յաւելուածական գումար մը թողուլ՝ եկեղեցւոյն պահպանման ծախքերուն համար:

Շատ աւելի գործնական կը գտնեմ որ Բարիզի կեդրոնական թաղերէն մէկուն մէջ, յարմար ու վայելուչ, բայց ածան տեղ մը դնեն հողը, եւ փոխանակ մեծածախս եկեղեցիի մը, սիրուն փոքրիկ մատուռ մը կառուցանեն Պ. Մանթաշեանի նուիրած գումարին մէկ մասովը. իսկ միւս մասը յատկացնեն, կէս մը եկեղեցիին պահպանմանը համար կալուածներ գնելու, եւ կէս մըն ալ եկեղեցիին մօտ դպրոց մը հաստատելու, կամ գոնէ դպրոցի մը սաղմը ստեղծելու, որ յետոյ՝ ուրիշ նուիրատուութիւններով որոնք չեն կընար պահպիլ, բնական ու ինքնաբեր գարգացումով մը պիտի ընդարձակուի եւ դառնայ կրթական կարեւոր հիմնարկութիւնը զոր անհրաժեշտ է որ ազգը ունենայ Բարիզի պէս մտաւորական կեդրոնի մը մէջ:

Եկեղեցիի մը շէնքը տալով Բարիզի Հայութեան, Պ. Մանթաշեան իր մէկ քմահաճոյքին եսական ու ամուլ գոհացում մը շնորհած կ'ըլլայ, կառուցանելով ամբողջութիւնը բարոյական շէնքին որուն պէտք ունի ազգը, այսինքն տալով ազգին հայ դպրոց մը հայ մատուռի մը քով, Պ. Մանթաշեան կենդանի ու արգաւանդ գործ մը կատարած կ'ըլլայ, եւ այն ասան միայն իր անունը կընայ անցնիլ Լազարեաններու, Ներսէսներու, Սամուէլ-Մուրատներու, Սանտարեաններու անուններուն, այսինքն մեր ամենէն աւելի սիրուած ու յարգուած անուններուն կարգը:

Տաճկահայոց կրած վիթխարի դժբաղդութիւններէն ի վեր, հայ հարուստներ, չափազանց սակաւաթիւ բայտուութիւններով, շատ քիչ գոհողութիւն յանձն առին Տաճկաստանի ողեսպառ Հայութեան վերքերը դարմանելու համար: Իր սաստանի մէջ, Ջանշեան

մը աւելի բան ըրաւ հայ որբերուն համար քան ուր է հայ հարուստ: արտօնաշմամանի մէջ, օտար մարդասէրները շատ աւելի դուրս, անձնուրրութիւն եւ զոհողութիւն ցոյց տուին քան մեր հարուստներէն շատերը: Մեր հարուստները, որոնց մէջ կան այնպիսիներ որոնք անձնապէս կարող էին բոլոր հայ որբերուն պահպանումը ստանձնել, բաւականացան մերթ ընդ մերթ գումարիկ մը նուիրելով այս կամ այն հանդանակութեան, գումարիկ որ իրենց հարստութեան բաղադրամասն աննշան «ողորմութիւն» մըն է եւ ոչ թէ յարգանքի արժանի «զոհողութիւն» մը:

Պ. Մանթաշեան, շատ աւելի հարուստ քան այդ բոլոր Հայերը որոնք ազգին կրթական զարգացմանը համար իրենց դրամը չխնայեցին, կարող է աւելին ընել քան անոնք բոլորը մէկէն. իմէ կախեալ է ապացուցանել թէ անոնց հողին իր մէջն ալ գոյութիւն ունի:

Կ'առաջարկեմ Բարիզի Հայոց թաղական խորհրդին, որուն մէջ այս գաղափարին համախոհներ կը կարծեմ թէ կան արդէն, որ այս սուրբութիւնները ներկայացնէ Պ. Մանթաշեանին:

Վայրկեանը յարմար է առաւել քան երբեք այս գաղափարին իրականացմանը համար: Այն հայ հարուստը որ պիտի կանգնէր Բարիզի մէջ դպրոց մը, որը կամ ազգաս հայ տղաքներուն միջնակարգ կանոնաւոր կրթութիւն մը տալու համար, պերճախօս չերթում մը տուած պիտի ըլլար օտարներու այն կարծիքին որով մեր հարուստները քարացած եսամոլներ կը նկատեն, ու գեղեցիկ ապացոյց մը մեր ցեղին մէջ համերաշխութեան, գոհաբերութեան, կրթասիրութեան ոգիին միշտ վառ մնացած ըլլալուն:

Յաջորդ յօդուածով մը պիտի մանրամասնեմ այն պատճառները որոնք Բարիզի մէջ հայկական քուէժի մը հիմնարկութիւնն ինծի նրկատել կուտան իբրեւ շատ կարեւոր բարիք մը մեր ազգին համար, ու պիտի ուրուազըծեմ այն կազմակերպութիւնը, ծրագրին ու գերը զոր այդ դպրոցն ըստ իս պէտք էր որ ունենար:

Ս. , 20ՊԱՆԵԱՆ



# ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ Բ.

— 0 —

Սուլթան Համիտի մասին այս շատ գեղեցիկ էջը, զոր կը թարգմանենք Revue Bleue-ին, հասուած մըն է զբքի մը որ պետի հրատարակուի ի մօտոյ . հեղինակը ծուծ Տոնիս կեղծ-նունին տակ սքողուած Տաճկաստանի մըն է : Համիտի հոգեբանութեան այս ճարտար վերլուծումին կը կցենք այդ ճիւղին սարսուցուցիչ դիմանկարը , զոր երկու տարի առաջ Monde illustre շաբաթաթերթը հրատարակած էր՝ իբրև «նարագոյն տոքիւման» մը այդ գեղեցիկ պատկերող , եւ որ արդէն ինքնին կը բաւէ՝ իր հիւանդ դազանի ահաւելի արտայայտութեամբը՝ բացա-տրել այդ հսկայ սճարագործին ամբողջ կնճոտ ու քսամներէ կեանքը :

Սուլթանը սեպտեմբեր 22ին իր յիսունեւ-իններորդ տարին մտաւ :

Իր տնճը , ժամանակին ընթացքին մէջ մեծ փոփոխութիւններ կրած է , եւ շատ դժուարութեամբ կարելի է այսօր իր վրայ ճանչնալ քսանուհինգ տարի առաջուան Ապտիւլ-Համիտ իշխանը :

Կզակը լայնցած է , գէմքին տալով բրտութիւն մը զոր չունէր առաջ . այտոսկրները որ ատենով չէին երեւար , հիմա դուրս կը ցատքեն խոռոչացած այտերուն մէջտեղէն , զորոնք կը ծածկէ՝ քսան տարիէ ի վեր՝ կարծ մօրուք մը որ հիմա աղբակի պիտի ըլլար եթէ խահ-վէի, հինայի ու դիտորի խառնուրդի մը միջոցով՝ որուն պատրաստութեան եղանակը չիս մը սորվեցուցած է իրեն՝ ինքն իսկ իր ձեռքով ու շատ յոռի կերպով չնեղկէր զայն սեւի ու շէկի ամենէն այլադան երանդներովը :

Թեթեւօրէն գմբէթարդ ճակատը իր մագ-թափութիւնը կը ծածկէ խոշոր ֆէսին ներքեւ զոր ինքը գործածական դարձուց Տաճկաստանի մէջ եւ որուն ձեւը , ծաւալն ու գոյնը գէմքին վտիտ տփգունութիւնը աւելի հիւանդագին ցոյց կուտան :

Քիթը աւելի կորածեւ դարձած է : Ընչացքը , այժմ աւելի թանճը , նմանապէս ներկուած , եւ զոր իր նուրբ ու նիւար ձեւքը կը փայ-փայէ յաճախ մեքենական մէսթով մը , հիմա դրեթէ ամբողջապէս կը ծածկէ վերի շրթուն-

քը՝ նուրբ ու չար . վարի շրթունքը աւելի հասարցած ու իր դրայնտ արտայայտութիւնը շեշտած է . անդթութեան ծաւքը որ կը լրացընէ այդ բերնին նկարագիրը , դիմագէտի մը համար ա՛յնքան շահեկան , աւելի խորունկ ու տեսանելի է դարձած :

Տափակ քունքերը վորոնք կը կտրեն կ'անց-նին շատ լայնարձակ ակնակապիճները , ա՛լ աւելի փոսացած են . եւ աչքերը , հիմա կիսովին ծածկուած՝ թոյլ կոպին ու ծանրացեալ յօնա-կամարին ներքեւ , ստուերի քարայրներու մէջ կարծես կը թաքցընեն իրենց նայուածքնե-րուն պլպլուկ բոցը :

Աչքերը ամենէն շուարեցուցիչ մասն են այդ պիմագծութեան որ սակայն ամբողջութեամբն ա՛յնքան կնճոտ է . իրաւ է թէ անոնք ընդ-հանրապէս խոռվեալ արտուութիւն ու նեղու-թիւն կ'արտայայտեն , բայց երբեմն ալ պիչ , սքողեալ , անակնարկ , կարծես թէ անթափանց մեղամաղձութեան մը մէջ սուղուած , վայրկեան մը յետոյ ցնորական սրութիւն մը , շարժիտ-տութիւն մը կը ստանան , երբ բարկութիւնը կամ վախը դայ իր արագ փայլակն այժակել անոնց մութ-դորշ՝ մըրկոտ երկնքի գոյնով՝ ծիածանին մէջ : Ու խենթի աչուրներու պէս , զիրենք շատ դիտողին վրայ գծնդակ ու անձ-կայոյղ սպաւորութիւն մը կը գործեն անոնք , որուն երկայն վարժութենէ մը յետոյ միայն կարելի է հանդուրժել :

Սա ճիշդ է որ Սուլթանին ամբողջ դիմադը-ծութիւնը իր այլազան նկարագիրները հաս-տատած է , նոյն իսկ նկարագիրն այն կեղծա-ւոր քաղցրութեան զոր երբեմն կը զգենու :

Միջահասակ , քիչ մը ողնաթիք , եւ սաստիկ նիւար , ինչ որ կը յուսահատեցնէ զինքը , այսօր՝ միայն շուշը վրան պահած ըլլալու եւ բեւոյթն ունի , եւ իրօք՝ ջիղերով միայն կ'ապրի : Այսպիսի կաղմուածք մը չէր կրնար չաղղել իր մտայնութեան վրայ : Ապտիւլ Հա-միտ իրականապէս ջլխտաւոր մըն է , մենա-մուլ մը , եւ իր ֆիզիքական վիճակը կրնայ բա-ցատրել իր նկարագրին հակասութիւնները :

Տաճիկ մը որ երկայն ատեն իրեն հետ մը-տերմական յարաբերութիւններ է ունեցած , իր մասին սա կարծիքը յայտնած է . «Մինչեւ այսօր չեմ գիտեր թէ այդ մարդը խելացի՞ է թէ ապուշ , քաջասի՞րտ թէ վախկոտ , բանլմամբ թէ յիմար » : Իր հոգեբանութիւնը բրոպլէմ մըն է , բրոպլէմ մը զոր սակայն ուսումնասիրու-թեամբ կարելի է լուծել :

Սուլթանը շատ ուշիմ է բայց բռնակալու-  
թիւնն ու մշտական սարսափը որուն մէջ  
կ'ապրի, բնական է որ զինքը պիտի ստիպէին  
իր բոլոր խելքը իր անձնական պահպանու-  
մին յատկացնել, եւ անոր այն կարողութիւնը  
միայն դոր-  
ժածել որ այս  
նպատակին  
կրնան ծառայ-  
յել, ինչպէս  
կասկածաւոր  
թիւնը, խոր-  
ամանկութիւ-  
նը, ինքնա-  
պաշտպանող-  
ականութիւ-  
նը. այդ կա-  
րողութիւն-  
ները, որոնք  
իր ունեցած-  
ներէն միմի-  
ակ դորժա-  
ծածներն են,  
հրէշային կեր-  
պով դարդա-  
ցած են, այն-  
պէս որ խել-  
դած են միւս-  
ները, եւ ջը-  
լախտէն յոգ-  
նած այդ ու-  
զեղին մէջ,  
բռնաւորական  
կիրքեր դար-  
ձած են: Այս-  
պէսով է որ  
Ապտիւլ-Հա-  
միտ, ժամա-  
նակ անց-  
նելով, կատա-  
րեալ մեհա-  
մով մը եղած



ԱՊՏԻԿ ԶԱՄԻՏ Բ,  
(Monde illustré ւաշուած)

է, այն մեհամոլներուն տեսակէն դոր-  
բժիշկները «հալածեալ-հալածող» կ'անուանեն:  
Օժտուած է սուր հոտառութեամբ մը եւ  
մեծ խորատեսութեամբ մը որոնք զինքը կա-  
րող կը կացուցանեն իրերու ընթացքին վրայ  
սքանչելապէս ճշգրիտ դադափար մը կազմե-  
լու, եւ զոր սակայն իր ախտաժէտ երեւա-  
կայութիւնը տարապայմանօրէն կը խոչորցնէ:

ատով կը բացատրուի իր ձեռք առած խստու-  
թեան միջոցներուն սաստկութիւնը: Իր մըտ-  
քին ճապկութեան շնորհիւ, իրերուն «երկ-  
րորդ» իմաստը կ'ըմբռնէ, եւ ամենէն վտան-  
գաւոր կացութիւններէն գիտէ օձիքը աղա-  
տել. վերլու-  
ծող եւ հոգե-  
բան, մար-  
դերը կը ճանչ-  
նայ եւ գիտէ  
զանոնք գոր-  
ծածել:

Դիւանագիր-  
տութեան պզ-  
տիկ վարպե-  
տութիւնն ե-  
րու շիտկամար  
հմտութիւն մը  
ցոյց տուած է  
միշտ. գիտէ  
Պետութեան ց  
պահանջումն  
երբ խեղդել  
անոնց միջև  
զանուած դըժ-  
տութիւնը ար  
ծարժելով:

Հայկական  
Ջարդերու մի-  
ջոցին, 1896-  
ին, այս թաք-  
թիքին մէջ  
չիտական ճար-  
պէսութիւնը  
մը] ցոյց տը-  
ւաւ:

Բայց իր  
այդ բոլոր ու-  
շի մութիւնը  
աղետաբեր է:  
Յաւերժ ապէս  
ենթակայ՝ մա-

հուան երկիւղին, ցաւագին ցնորքներու, խղճի  
խայթերու եւ ճանճրոյթի, իր անձին պաշտ-  
պանութեան մտահոգութիւնը իր դատաստա-  
նական խստութիւններն ու կասկածաւորութեան  
զղուշութիւնները մինչեւ անգթութիւն ա-  
ռաջնորդած է: Եւ փոխանակ իր երկրին դա-  
տին ծառայելու, այս ողորմելի միլայետը, իր  
գոյութիւնը պաշտպանել միայն մտածելով:

իր հպատակները կը կեղեքէ, մտաւորական ա-  
մէն զարգացում կ'արգելէ, իր պետութիւնը  
կը կործանէ, անոր ամենէն զեղեցիկ նահանգ-  
ները թոյլ կուտայ որ խլին :

Եթէ, ինչպէս որ ըսած են՝ քիչ մը չափա-  
զանց ընդհանրացնելով, խորամանկութիւնը  
Արեւելցիներուն ուշիմութիւնն է, Սուլթանը  
իրենց մէջ կրնայ հանճար մը նկատուիլ : Ի-  
րօք, խորամանկութեամբ է որ գահը բարձրա-  
ցած է, անով է որ հոն կը մնայ, անով է որ  
կը կառավարէ :

Մածուկ յամառութեամբ մը լեցուն, ուժին  
առջեւ միշտ սեղի տալով՝ այն ներքին մը-  
տածմամբը թէ օր մը նորէն ձեռք կ'անցունէ  
ինչ որ հիմա պարտաւորուած է թողուլ, հը-  
նարքներով հարուստ, հրաշալի կերպով գիտէ  
վասնդներէն ճողոպրիլ՝ միշտ նորանոր կե-  
լուքներ գործածելով . ճարտար ծուղակ լա-  
րող, իր թշնամիներուն ամէն ցածութիւն  
ընելու կարող՝ երբ կը վախնայ անոնցմէ, եւ  
ամէն անգթութիւն ի գործ գնելու՝ երբ զա-  
նոնք կը յաղթանարէ, իր վրիժառութիւններուն  
հաճոյքը կ'ըմբռնինէ այնքան աւելի հեշտա-  
ւէտօրէն որքան հաջերութեամբ զանոնք եր-  
կարօրէն գաղտնիքի մէջ սնուցած է :

Ոչ միայն զինքը նեղող մարդու մը կեանքը  
իրեն համար ո եւ է արժէք չունի, այլ նոյն  
խակ արիւնի հոսումը կարծես կը հանդարտե-  
ցընէ եւ կը հրճուեցնէ իր հիւանդ, փրթելու  
չափ ձգտուած ջրղերը : «Փիչերը, քնանալէ ա-  
ռաջ, կը պատմէ իր սենեկապահներէն մին,  
ընթերցումներ ընել կուտայ իր մօտ . իր սի-  
րական սրբերն անոնք են որոնց մէջ սպա-  
նութեան ու զլխատման նկարագրութիւններ  
կան : Ոճիրներու վրայումը ուղեղը կը բորբոքէ  
եւ քունը կը փախցնէ, բայց երբ կարգացողը  
հասնի այնպիսի տեղ մը ուր արիւնի հեղումը  
կը նկարագրուի, ջրերն իսկոյն կը հանդար-  
տին եւ քունը կը տանի» :

Իր բնութեան հիմքը, արդարեւ, անգութ է :  
Երբ նեպի ազան Թայֆայի մէջ իւզոտած չը-  
ւաններով խեղդամահ ըրաւ խեղճ Մահմուտ  
ձեւլաբատին ու Միլհաս փաշաները, Սուլթա-  
նը, ուղեւոր իր զահերուն գլուխը տեսնել, հը-  
րամայեց որ անոնց գլուխը զմոսնն ու Պո-  
լիս զրկեն :

Ճշմարիտ է որ ասոր մէջ կասկածառութենէ  
ներչնչուած զգուշական միջոց մըն ալ պէտք  
է տեսնել . Ապտիւլ Համիտ կ'ուզէր ապահով

ըլլալ թէ իր երկու թշնամիները իրօք մեռա՞ծ  
են թէ ոչ :

Բատիշահին այս կասկածառութիւնը երբեմն  
մինչեւ խնթութեան մօտեցող աստիճանի  
մը կը հասնի : Քատրի փաշա զոր պաշտօնաանկ  
ըրած եւ Էտիրնէի վալի անուանած էր,  
քիչ յետոյ մեռաւ այնտեղ : Անոր մարմինը Պո-  
լիս պիտի թաղուէր, եւ զայն բերող զագաղը  
արդէն ճամբայելած էր, երբ Սուլթանը յան-  
կարժ հրամայեց որ զայն Էտիրնէ դարձնեն .  
կասկած ունեցած էր թէ Քատրի փաշա մե-  
ռած չէր եւ թէ կ'ուզէր թերեւս, գաղաղին  
մէջ պահուրած, գաղտնի կերպով Պոլիս մըտ-  
նել՝ իր տիրոջը կեանքին գէմ դաւելու համար :

Ուրիշ անգամ մը, հետեւեալ օրը Ալի-Սուա-  
վիի ձեռնարկին ու Չրաղանիի խոռվքին՝ որ  
զինքը տակնուվրայ ըրած էր, Ապտիւլ Համիտ,  
իր ստալին քարտուղարը կանչելով, որ այդ  
միջոցին Ալի Յուսատ պէյն էր, զայն պատու-  
հանին մօտ քաշեց եւ ցոյց աւելով Բարձրագոյն  
Դուռը որ մէկ քանի քիլոմէթր հեռուն կը գըտ-  
նուի, «Աչքիս առջեւ եղածի պէս կը տեսնեմ  
կոր, ըսաւ, վախէն դողալով . այնտեղ ամենքն-  
ալ հաւաքուեր են իմ գահընկէցութիւնս վճուե-  
լու համար» :

—Ո՞վ, հարցուց քարտուղարը՝ սահմրկած :

—Նախարարներս, պատասխանեց Սուլթանը,  
իմ նախարարներս, որոնք զիս վար առնելու  
որոշումը տալու վրայ են : Չե՞ս տեսներ կոր :

Ալի Յուսատ պէյ մեծ գժուարութեամբ յաջո-  
ղեցաւ իր տիրոջը ցնորատեսութիւնը փարս-  
տել :

Բայց նաեւ բազմաթիւ օրինակներ տուած է  
անգթութեան մը որ, նոյն իսկ երբ իր մէջ  
քնացած կը մնայ, յաճախ կը մատնուի իր  
բարկութեան կամ զուարթութեան վայրկեան-  
ներուն մէջ :

Օր մը որ իր առջեւը կը խօսէին այն բար-  
բարու սովորութեանը մասին զոր մէկ քանի  
նախկին փատիշահներ ունէին Հին-Սէրային  
բակին մէջ կոճղի վրայ ի ցոյց դնելու իրենց  
հաճելի ըլլալէ գաղբած վեզիրներու կարուած  
գլուխները՝ որպէսզի այդ տեսարանը փրկարար  
ազդեցութիւն ունենար իրենց յաջորդին, Ապ-  
տիւլ Համիտ զլուխը ճօճեց՝ երազկոտ, ու ըսաւ .  
«Ա՛խ, ի՛նչքան ցաւալի է որ ես ալ չեմ կրնար  
միեւնոյն բանը ընել» . եւ այս ֆրազը ստորա-  
գրծեց բռնադատիկ ժպիտով մը՝ կատակի ձեւ  
մը տալու համար անոր :

1896ին, ընդունելով լուսաւորչական Հայոց պատրիարք, Աշըքեան սրբազանը Պապ-Ալիի առջեւ հայկական ցոյցէ մը յետոյ, որուն յաջորդեցին ջարդերը, Ապտիւլ Համիտ ըսաւ ծերունի եկեղեցականին. «Հայերը թե-րեւս այս միջոցով եւրոպական միջամտութիւն մը հրաւիրին: Գիտցէք ուրեմն որ օտար նաւատորմիղները կրնան նեղուցէն անցնել եւ եւրոպական բանակները կրնան գալ մայրաքաղաքս կոխել. բայց դեռ անոնք այս հողին վրայ ոտք չդրած, Վոսփորի ջուրերը Հայոց արիւնովը կաս-կարմիր պիտի ըլլան»: Ծերունին սարսափահար ծունկի ինկաւ եւ գթութիւնը հայցեց Սուլթանին, որ ա՛լ չուզելով անոր խօսքերը մտիկ ընել, յանկարծ հրամայեց որ մեկնի:

Իր այդ ըսածը անշուշտ մոռցած էր երբ 1896ին, մեծ կոտորածներէն յետոյ, կաթողիկէ Հայոց պատրիարք Աղաբեան սրբազանին չնորհած մէկ ունկնդրութեանը միջոցին, ինքզինքը կ'արդարացնէր, պնդելով թէ ինքը երբեք պատասխանատու չէր այդ ջարդերուն զոր կը պարսաւէր եւ զորոնք կատարել տալու, կ'ըսէր, զինքը բռնադատած էին:

Մոռացում կամ կեղծաւորութիւն, Ապտիւլ Համիտ երբեք չի խոստովանիր:

Այն բաղմամբիւ ոճիրներուն մէջ որոնց մեծ մասը անձանօթ մնացած են, կան ստկայն այնպիսիներ որոնք մեծ ազմուկ հանեցին: Իր թիկնապահներէն մին, Կանի պէյ Ալպանացին, որ, իրմէ վայելած պաշտպանութենէն խրախուսուած, ամենալայրագ չարագործութիւններ կատարած էր՝ իր հաշտոյն ինչպէս եւ իր տիրոջը հաշտոյն, օր մը այլեւս նեղիչ դարձաւ իրեն համար: Սուլթանը զիւրաւ օձիքը ազատեց անկից՝ Բերայի կաթնավաճառանոցի մը մէջ Հաֆըզ Էօմէր վաչա անուն մարդու մը ձեռքով դայն դաշունել տալով: Ատով մէկտեղ, ամենախորին յուզմ էնք կեղծեց այդ սպանութեան համար, եւ հրամայեց որ սպանիչը ձերբակալեն եւ պատժեն, մինչդեռ ձեռքի տակէ Ելլաղլի գործակալները այդ մարդը արտասահման կը փախցնէին:

Միեւնոյն ատեն, նրբացեալ ճարպիկութեամբ մը, Ապտիւլ Համիտ սուտ լուրեր տարածել կուտար որ այդ ոճիրին իբրեւ հեղինակ մատնանիչ կ'ընէին անձ մը որ իրեն մեծ

մտատանջութիւն կը պատճառէր, ծաղիտ պէյը, մեծ-եպարքոս Հալիլ-Րիֆաթ փաշային որդին: Այդ բանասարկու զրոյցները կ'ամբանային ճշմարտանման փաստերով, ինչպէս այն ատելութիւնը զոր ծաղիտ պէյ կը տածէր այդ Կանիին համար որ զինքը հրապարակաւ բրտօրէն նախատած էր:

Իբրեւ վարպետ դերասան, Սուլթանը հաւատարմութիւն կեղծեց այդ ստույթիւններուն որոնց հեղինակը ինքն էր, եւ լրբութիւնը այնչափ առաջ տարաւ որ ինքզինքը սաստիկ զայրացած ձեւացուց եւ պսոթուելը փափաքեցաւ այն անիւզին զոր կ'ամբաստանէր: Ատոր համար խորհեցաւ շահադործել վրէժ-խնդրութեան ոգին, որ Ալպանացեացմէջ աւելի յարգի է քան նոյն իսկ Գորսիքացուց, եւ ըսաւ Հալիլ պէյին, որ Կանի պէյին պէս թիկնապահ էր եւ անոր քեռայրը, թէ իր ազգականին՝ որ դահուն անձնուէր ծառայ մըն էր՝ սպանումը անսրդանք մըն էր իրեն Ապտիւլ Համիտին համար. «Կ'արթօնէ՞ք զիս, տէր իմ, հարցուց զիւրաբար որք Ալպանացին, որ քեռայրիս արիւնին վրէժը լուծեմ»: —Ո՛չ, ո՛չ, Հալիլ, ո՛չ տակաւին, պատասխանեց աշխուժիւ Սուլթանը, որ այսպէսուով պէտք եղածին չափ արտօնած էր այն սպանումը զոր կը փափաքէր:

Վրէժխնդրութիւնը այնպիսի կերակուր մըն է որ պաղ կ'ուտուի. Արեւելքի մէջ աւելի քան այլուր: Եօթը ա ինս անցաւ առանց ո եւ է միւջադէպի. այդ միջոցին Հալիլ պէյ եւ իր ազգականներէն մին, քստմնելի էսատ փաշան, Եանեայի ձիւրոր պահակազունդին պետը, ամէն բան պատրաստեցին, առանց որ Սուլթանը խառնուէր իրենց ծրարին կատարմանը. վերջապէս էսատ, անցեալ աշնան, Կանիի ընտանիքին հին ծառաներէն մէկուն, Հաճի-Մուսթաֆային, յանձնեց գործը. այդ մարդը Պուլիս եկաւ, ցորեկ ատեն Քարաքէօյի կամուրջին գլուխը ծաղիտ պէյի անցնելուն սպասեց եւ ընկուկէրի երեք հարուածով սպաննեց դայն: Մարդասպանը ձերբակալուեցաւ, դատուեցաւ ու մահուան դատապարտուեցաւ. սակայն, հակառակ մեծ եպարքոսին թախանձանքին ու բողոքներուն, ոչ միայն այդ մարդը անպատիժ մնաց, այլև առատօրէն վարձատրուեցաւ եւ մինչև այսօր կ'ապրի, հեռուոր հահանդի մը խորը, պարտականութիւն մը կատարած ըլլալու գոհունակութեամբ:

Ab uno disce omnes (մէկհատէն միւսը բոլորը դատեցէք) : Աստուք են այն միջոցները որ Սուլթանը կը գործածէ զինքը նեղողները ջնջելու համար, եւ այնքան մեծ է իր ճարպկութիւնը որ քիչ անգամ տոնպիսիներն իր ձեռքէն կը խալըսին :

Այդ բացառութիւններէն մին է Օտեան էֆէնտին, պետական գեր-քարտուղար Վաճառականութեան եւ Հանրային Շինութեանց նախարարութեան մէջ . Սուլթանը, շատ մը պատճառներով, որոշած էր զայն անհետացնել, երբ այն ատենուան արարողպետը, Քեամիլ պէյ, իր տիրոջը զիտաւորութիւնը դադատուկ իմանալով, տեղեկացուց Օտեան էֆէնտինին, որ կրցաւ Բարիզ փախչելով կեանքը ազատել :

Ապախլ Համիտ իր քստմնելի որոշումները երբեմն պաղարիւնով կուտայ, երբեմն ալ զայրոյթի ազդեցութեան տակ . առաջիններուն անգթութիւնը աւելի նրբացեալ է, վերջիններունը աւելի բիրտ, սրովհետեւ, կտտաղութեան բորբոքմանը մէջ, ինքզինքը կը մատնէ, խոհեմութիւնն ու խորամանկութիւնը կը մոռնայ եւ այդպէս իր հողին մերկ ցոյց կուտայ :

Սուլթանը, ամէն ջլախտաւորի պէս, զիւրազրդութեան վայրկեաններ ունի որոնց միջոցին բուռն արարքներու կը մղուի : Քանի քանի անգամ պատահած է որ քարտուղարներ կամ սենեկապահներ ձեռած է : Անգամ մը կաղամարը Քիւչիւկ Սայիտ փաշային գլխուն նետեց, որ այն միջոցին պալատին առաջին քարտուղարն էր, եւ որ հաղիւ կրցաւ հարուածէն խուսափել : Ուրիշ օր մը միւսեւոյն անձին զէմ յանկարծական կտտաղութեամբ մը լեցուած՝ Նղիպատսի խնդրոյն վրայ վիճաբանութեան մը միջոցին, բեկովեր մը հանեց գրպանէն ու քիչ մնաց որ պարպէր փաշային վրայ, եթէ ներողութիւն չհայցէր ան :

Կ'ըսեն թէ Ապախլ Համիտ չուտով կը զըզջայ իր ունեցած բուռն վարմունքներուն համար, որովհետեւ կը վախնայ որ իր մարդիկը ռի կը պահեն իրեն : Արդէն իր քաղաքականութեան ինչպէս իր խառնուածքին յատկանիշն է հեզ ու բարի երեւալ ճգնիլը եւ խանդաղատանքի գանձերով լեցուն սիրտ մը ունենալ ձեւացնելը, կը ջանայ ամէն կողմ համակրութիւններ ձեռք ձգել, զգալով որ ոչ ոք զինքը կը սիրէ . ուստի յաճախ զոհի ձեւեր կ'առնէ, արտնջալով մարդոց չարութենէն եւ սպերախտութենէն, եւ իր գանգատները

անկեղծութեան այնպիսի շեշտ մը ունին որ զինքը մտիկ ընողները առջի բերան կը խաբուին :

Թէպէտ ձայնը բնականօրէն ուժով ու թաւ է, գիտէ զայն փաղաքշական ու գրեթէ քաղցր ընել՝ երբ ուզէ, ինչպէս որ հմայիչ դառնալու ձիրքն ունի՝ երբ փափաքի իրեն մօտեցողներուն, մասնաւորապէս օտարականներուն, սիրտը գրաւել : Անոնց հաճելի ըլլալու համար ոչինչ կը խնայէ, եւ հազուադէպ է որ Ներոպացի մը իրեն մօտենայ՝ առանց հրապոյրը կրելու այդ սիրալիւր բնութեանը որ գմայլելի թաքթով մը գիտէ ինքզինքը շոայլել : Սուլթանը, արդարեւ, քաղաքալարութեան եւ հիւրընկալութեան արուեստն ի գործ կը դնէ, ոչ միայն Արեւելցիի պէս այլ եւ Ներոպացիի պէս : Ոչ մէկ տեղ, երեւելի օտարականներ այնքան արքայալայել ընդունելութիւն պիտի չդտնէին ինչպէս Երլտըզի պալատը . պարզ դրօսաչըջիկներն անգամ, որոնք, Պոլսէն անցնելու ատենին «սելամըք» ին ներկայ կը գտնուին, այնտեղ կը պատասխարուին փաղաքշիչ շնորհակալութեամբ մը . եթէ բազմաթիւ խումբ մըն են, արարողութեան ատեն ամէն տեսակ հաճոյակատարութիւններով կը մեծարուին . եւ մեկնելէ առաջ կը գտնեն ճոխ պիւֆէ մը Երլտըզի քէօշիկին դարատափին վրայ շրախուած, սիկառէթներ կը մատուցանեն իրենց, Սուլթանին թիկնապահներէն մին կ'երթայ իրենց հաղորդել կայսերական ողջոյնները : Պոլսէն մեկնելու ատենին, ուր պալատին մէկ հրամանին համաձայն իրենց պտոյտին գիւրութիւններ մատուցուած են, Շեքեր Ահմէտ փաշա զօրավարը իրենց կը նուիրէ, իբրեւ յիշատակ ն. Վեհափառութեան, սաճկական շաքարներ, սիկարեթներ, եւն : Եւ այդ բոլոր մարդիկը այլեւս բլորովին անհիմ կը նկատեն Երոպայի գանգատները այդ անթերի ճէնթլմէնին հանդէպ, որուն գովեստը կ'երթան տարածել Արեւմուտքի սալոններուն մէջ :

ԺՈՐԺ ՏՈՐԻՍ

(Շարունակելի)



### ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

— 0 —

Պարսից Շահը իր վերջին դիւանագիտական պտոյտին ամբողջ ուղեգծին վրայ համակրանքի եւ երախտագիտութեան արտայայտութիւններ ընդունեցաւ հայ ժողովրդէն: Ատի արդիւնքն էր այն բարեկամական վարմունքին զոր պարսկական կառավարութիւնը իր հայ հպատակներուն նկատմամբ սկսաւ ցոյց տալ՝ նասրետտին Շահէն ի վեր, որուն ուղղութիւնը կը շարունակէ արդի Շահը: Առաջին անգամ կովկասէն անցնելուն, Թիֆլիսի եւ Պաքուի Հայութիւնը ջերմ համակրանքի ցոյցերով պաշարէց զինքը, Բարիզի հայ գաղութը՝ Պ. Պ. Չերազի եւ Բաշինջազիանցի բերնով իր շնորհապարտ զգացումներն յայտնեց անոր, Օսթէնտի մէջ Լոնտոնի պարսկական դեսպանը յանձնեց անոր ուղերձ մը Բրոֆ. Յակոբեանի նախածնունդութեամբ Լոնտոնի Հայոց կողմէ ստորագրուած, եւ կովկասէն երկրորդ անգամ կ'աթողիկոսը էջմիածնի մէջ հանդիսաւոր ընդունելութեամբ մը մեծարեց Իրանի վեհապետը: Այս համակրանքի միահաղոյն արտայայտութիւնը զոր հայ ժողովուրդը ամեն կողմ քնաղղական մղումով մը ընդ առաջ բերաւ պարսիկ ինքնակալին, շատ ուշիմ դիւանագիտութեան մը արդիւնքն էր որքան երախտագիտութեան պարտքը մը հատուցումը: Ատով Հայերը ոչ միայն ամբացուցած եղան այն բարեկամական կապերը որոնք այս վերջին քառորդ դարուն մէջ սկսան հիւսուել պարսիկ կառավարութեան եւ հայ ժողովրդին միջեւ, այլ եւ սպացուցած եղան Եւրոպային թէ Տաճիկներուն ու Հայերուն միջեւ բացուած պայքարը առաջիններուն մահմետական ըլլալը չէ որ իրեն պատճառ ունի, քանի որ այդ միեւնոյն Հայերը կը փութան յարդանք ու համակրութիւն արտայայտել ուրիշ մահմետական երկրի մը վեհապետին որ իրենց հաւաքական ու անհատական իրաւունքները երաշխաւորելու խելացի որոշումը տուած է:

Շահը, որ զգաց այս բոլորը, իր անկեղծ գոհունակութիւնը յայտնեց ամէն տեղ Հայերու կողմէ իրեն մատուցուած մեծարանքէն, եւ Պարսկաստան զարձին՝ իր առաջին գործը եղաւ հրաման դրկել պարսկական նահանգներու

կուսակալներուն որպէսզի, ինչպէս կը տեղեկագրէ «Թայմզ», «Պարսկահպատակ Հայերուն իրենց աջակցութիւնը շնորհն զպրօցներ հիմնելու, ճաներ արտասանելու կամ բանախօսութիւններ ընելու՝ կրթութիւնը տարածելու նպատակով, եւ ազգային ու վաճառականական ընկերութիւններ հաստատելու՝ առանց որ ամէն անգամ պարտաւոր ըլլան Թեւրանի կեդրոնական կառավարութեան գիմելով թոյլաւորութիւն խնդրելու»:

Ոչ մէկ մահմետական վեհապետ այսպիսի լայնամիտ ու վեհանձն սրբուհի չէր տուած տակաւին, — հին արաբ ամիրապետներէն ի վեր, որոնք, ըմբռնելով որ Հայերուն բարօրութեանը աջակցելով՝ նոյն ինքն իրենց շահերուն լաւագոյն ծառայութիւնը մատուցած կ'ըլլային, հաւանեցան որ հայ ժողովուրդն ինքնավար կազմակերպութիւն մը ունենար Բագրատունիներուն մականին տակ: Շահը այս բանը ըրաւ, անշուշտ ոչ թէ որովհետեւ իրեն ուղղուած գովեստներուն խունկը զինքը զինովցուցած էր, այլ որովհետեւ ըմբռնեց թէ իրեն հպատակ եղող Հայերուն շնորհելով իրենց բարոյական ու նիւթական զարգացման համար անհրաժեշտ եղող ազատութեան պայմանները, նոյն իսկ իր պետութեան ամենէն կենսական շահերը պաշտպանած կ'ըլլար: Պարսկաստանի մէջ ինչպէս ամէն տեղ, հայ տարրը միջնորդ հանդիսացած է միշտ, եւ այժմ կը հանդիսանայ առաւել քան երբեք, եւրոպական քաղաքակրթութեան եւ արեւելեան ողջին միջեւ: Հայն է որ վաճառակաւնութիւնն ու ճարտարարուեստը պիտի ծագկեցնէ Պարսկաստանի մէջ, եւ իր պարսիկ բնակակիցները պիտի մղէ նոյն շաւղին մէջ թեւակելախու: Հայն է որ պիտի դիւրացնէ Պարսից մէջ տարածումը արեւմտեան դաղափարներու, ճշտումներու, հաստատութեանց եւ բարքերու, եւ մեղմացընելով անոնց մէջ օտարատեցութիւնը եւ մուսուլմանութիւնը զոր մահմետական կրօնքը բերած է այդ գերազանցօրէն ազնիւ եւ ուշիմ ցեղին, պիտի մերձեցնէ զայն նոր աշխարհին ազատ ու եզրայրական ողիին, զոր արդէն անհունապէս կարող է ընդգրկել այդ ժողովուրդը որ հնութեան մէջ Ալեքսանդրին վեհ վարդապետութիւնը յղացաւ: Շահը ասոնք հասկցած էր. եւ գիտեց մանաւանդ թէ Եւրոպայի մէջ Պարսկաստանի քաղաքական շահերն ամենէն անձնուէր եւ ամենէն իմաստուն կերպով պաշտպանողները Հայեր էին, ներքեւն իման, Մեղքոն իման, եւն, եւ թէ Պարսկաստանի միակ պատուիրակը Տիեզերական Յուցահանդէսին Համաժողովներուն մէջ՝ Հայ մըն էր, Պ. Հ. Առաքելեանը, ինչպէս եւ Պարսից

ճարտարագրութեամբ ֆրանսական ծուցանդէսին մէջ ներկայացնելու գործը Հայ մըն էր որ վարեց , Բիթապէի խանը :

Մաղթելի է որ Շահը միշտ պահէ իր այդ բարի տրամադրութիւնները Հայոց նկատմամբ . իսկ Հայերը անշուշտ միշտ պիտի շարունակեն կատարել իրենց այդ դերը որ այնքան նպաստաւոր է իրենց ցեղային շահերուն որքան Պարսկաստանին : Եւ այս պայմաններուն մէջ՝ պարսկահպատակ Հայութիւնը կարող է , եւ պարտաւոր է , ամէն ձեռնարկ փորձել կրթական եւ անդամակազմի գործունէութիւն մը զարգացնելու համար . Պարսկաստան՝ առ այժմ՝ ապաստանարան մը կը կայանայ մեր ցեղին պահպանման ու իր քաղաքակրթական յատկութեանց մշակման համար . պէտք է յիշատակել զնախնայելի կարեւորութիւնը այս յոյսի նշոյլին : Պարսկաստանի Հայերը շատ լաւ գագացած ըլլալ կը թուին զայն . « Գիտակից ջանքեր » տիրող սով յօդուածի մէջ գրուած էր այն փորձերը զոր Պարսկաստանի Հայութիւնը սկսած է քանի մը ատրիէ ի վեր քաղաքակրթական զարգացմանը համար՝ մղուածով թիֆլիսէն ու Պոլսէն Պարսկաստան գացող գործընկերու , որոնք տեսնելով գործունէութեան ընդարձակ ու բերրի դաշտը որ այնտեղ կայ պատրաստ՝ իրենց ուժերը տարած են հոն արդիւնաւորելու : Այդ ճիգերուն մէջ առաջին տեղը պէտք է բռնէ հայ ժողովուրդը Պարսկին ու պարսիկ ազգն իր անցեալ քաղաքակրթութեամբն ու ներկայ հոգեբանունութեամբը Հայուն ճանչցնելու աշխատութիւնը որ դեռ շատ քիչ ձեռնարկուած է եւ ներկայիս մէջ Հայոց համար ամենէն անհրաժեշտ ու ամենէն շահեկան գործերէն մէկն է : Այս բոլորին անվտանգ ու անկաշկանդ իրագործմանը համար պարսկահպատակ Հայերը առաւել քան երբեք պարտաւոր են հետու կենալ ամէն շարժումէ որ պարսկական կառավարութեան կասկած կրնայ ներշնչել եւ Հայոց ոչ մէկ օգուտ չտալէն դատ՝ այս ամբողջ նպատաւոր կացութիւնը կրնայ մէկ հարուածով կործանել : Մեր յեղափոխական գործիչները , որ անցեալին մէջ այս սխալը գործած են , անարգարանալի պիտի ըլլային եթէ այսուհետեւ զայն վերանորոգէին Պարսկաստանի մէջ , հայ ցեղը քաղաքական հեռանկարներ չի կրնար ունենալ , մեզի համար քաղաքական յոյսեր գոյութիւն ունին՝ աշխարհագրական , դիւանագիտական ու պատմական պատճառներու բերուածով՝ միմիայն Տաճկաստանի մէջ , եւ այն ալ՝ որոշ շրջանակի մը մէջ սահմանազրջուած : Պարսկաստանի մէջ , Հայերը պէտք

է միմիայն մտաւորական ու առեւտրական զարգացումն իրենց նպատակ ունենան , ինչպէս եւ իրենց ցեղային գոյութեան պահպանումը , — քան մը որ հոն Հայոց համար կարելի է միշտ ունենալ առանց ո եւ է կերպով պարսիկ կառավարութեան ներդրութիւն կամ կասկած պատճառելու՝ եթէ պարսիկ կառավարութիւնը պահէ իր այժմեան ուշիմ տրամադրութիւնները : Պարսկաստանի Հայերուն խաղաղական զարգացումը ոչ մէկ կերպով արգելք չի կրնար համարուիլ այն ընդհանուր բաղձանքին զոր մեր ցեղը կը տածէ երկրիս մէկ կէտին վրայ իրեն պատկանող ազատ անկիւն մը ունենալու . — ընդհակառակն , Պարսկաստանի Հայութիւնը , զարգանալով , գորտնալով , բարոյապէս ու նիւթապէս , կրնայ գիտակցորէն ու լրջօրէն աջակցիլ այն ձեռնարկներուն որ պիտի կատարուին Պարսկաստանէն դուրս՝ Հայոց քաղաքական երազին իրականացում տալու համար :

Կէտ մը՝ զոր գեռ ոչ ոք զիսել չտուաւ՝ այս պարսկահայ յարաբերութեանց մէջ , եւ որ ամենէն կարեւոր կողմը կը կանգնէ այդ խրոնոթոյն , սա է որ երկու ցեղերուն միջեւ հիւսուող այս կապերը պէտք չէ որ նկատուին մեր կողմէն իբրեւ միմիայն արդիւնքներ ազատամիտ վեհապետի մը անձնական ձգտումներուն . եթէ այդպէս ըլլար , սպառնալուքն ու է ամբողջութիւն չէր կրնար այլ եւս ներկայացնել մեզի համար Պարսկաստանի մէջ , որովհետեւ կապը գոյութիւն ունենալով լոկ վեհապետի մը անձին ու հայ ժողովրդին միջեւ , այդ վեհապետին յաջորդները կրնան՝ տարբեր ձգտումներէ մղուելով եւ տարբեր ազդեցութեանց հնազանդելով՝ հայկական քաղաքականութիւն մը վերսկսիլ : Տաճկաստանի մէջ ալ եղած են վեհապետներ որ քիչ շատ համակեր են գտնուած Հայոց նկատմամբ , բայց որովհետեւ համակրութիւնը լոկ անձնական է եղած եւ թուրք ու հայ ցեղերուն միջեւ անկեղծ ու հիմնական եղբայրակցութիւն մը երբեք գոյութիւն չէ ունեցած , Սուլթանի փոփոխութիւն մը բաւական եղած է որպէս զի անանցանելի խրատաններ բացուէին երկու տարբերուն միջեւ : Պէտք է որ ամենք ըմբռնենք որ կապը պէտք է հաստատուի պարսիկ եւ հայ ժողովուրդներուն միջեւ : Եւ այդ կապը , որ ճակատագրականապէս սահմանուած էր ուշ կամ կանուխ հաստատուելու , ամենէն բնական , ամենէն դիւրին կերպով պիտի ամրանայ՝ եթէ հարցին իսկութեանը թափանցենք եւ ըստ այնմ շարժինք : Պարսիկն ու Հայը միեւնոյն ցեղին կը պատկանին , եւ մարդկային խումբերու

միջեւ ամենէն հզօր, ամենէն ներքին կապը, ամենէն գիտական ըմբռնումին համեմատ, ցեղային կապն է, ինչպէս եւ հակառակութեան ամենէն իրական շարժառիթը ցեղային սարքերութիւնն է: Կրօնքները, քաղաքական ու տնտեսական պատճառները ուժեղ բայց վաղանցուկ մղիչներ են պայքարի: Ինչեր ալ անցած ըլլան Իտալիոյ ու Ֆրանսայի միջեւ, այդ երկու երկիրները եղբայր երկիրներ են եւ սահմանուած են իրարու հետ գաշնակցելու, ինչպէս եւ Ռուսիան սահմանուած է հաշտուել Բոլոնիոյ հետ՝ արդար հաշտեալարգարութեամբ մը, հակառակ արիւնոտ խրամատին որ բացուած է երկուքին միջեւ: Պարսկին ու Հայուն միջեւ, որոնք արիական ընտանիքին երկու հարազատ զաւակներն են, պատմութեան ընթացքին մէջ՝ կրօնական ու քաղաքական պատճառներու բերմանքով՝ բազմաթիւ եղբրական բաղխումներ տեղի ունեցած են, որոնց մէջ սակայն մերձեցումի, դաշնակցութեան մէկ քանի նշանակալից փակաղծեր գոյութիւն ունեցած են արդէն: Մենք չենք կրնար մոռնալ այն բոլոր չարիքը զոր Պարսիկները մեզի հասուցած են, բայց եթէ Պարսիկը այսօր, զգալով իր երէկուտն սխալը՝ որ վերջ ի վերջոյ իրե՛ն ազետաբեր եղաւ, կ'ուզէ մեզի հետ բարեկամական կապեր հաստատել եւ անցեալը մեզի մոռցնել, պէտք է գոհ ըլլանք այս երեւոյթէն, օգտուինք անկից, եւ մտածենք թէ թերեւս ատենն հասած է հիմա ուր երկու ցեղերը, ըմբռնելով իրենց արիւնի եւ շահերու խնամութիւնը, պիտի ձեռք ձեռքի տան գիտակից, անխարդախ եւ տեւական մերձեցումով մը զոր այլեւս ոչինչ պիտի կարենայ քանդել: (Մերձեցումը նաեւ պէտք է որ տեղի ունենայ Քիւրտին եւ Հայուն միջեւ, որոնք միեւնոյն ցեղին կը պատկանին, եւ որոնք՝ օտար ցեղի մը էնթրիկներուն զո՞հ ցաւալի սխալանքով մը իրարու դէմ դանակ կը վերցընեն այսօր, մինչդեռ պէտք էր միանային զերենք երկուքն ալ ճնշող նոյն բռնաւորին դէմ ցցուելու համար):

Այս բոլորը պէտք է որ արմատապէս ըմբռնել տանք պարսիկ ժողովուրդին: Անոնք որ երկու ժողովուրդներն իրարու պիտի մօտեցընեն, ամենէն գովելի դերը կատարած պիտի ըլլան: Անտարակոյս, Պարսկաստանի մէջ՝ Շահը միապետ մըն է, եւ իր կամքը ամենազօր. բայց իր նախարարներուն, խորհրդականներուն, կրօնապետներուն ազդեցութիւնը Շահին

նին որոշումներուն մէջ հետու է անմասն ըլլալայլէ. Նասրետտին ու Մուղաֆերէտտին Շահերը հայասիրական ուղղութիւն մը ընդգրկեցին՝ գլխաւորապէս խորհրդովն իրենց բարձրագոյն պաշտօնատարներէն ոմանց որոնք մտելով բարեկամներն ու յարգողներն են Մեղքոններուն ու Ներիմաններուն:

Պէտք է որ պարսիկ ժողովուրդը առանց հասկնալու, առանց համոզուած ըլլալու, սկամայ հպատակի Շահին հայասիրական հրամանին իր խուլ հակառակութիւնը՝ այդպէսով՝ կրնայ միշտ խախուտ կացուցանել պարսկահայկական համերաշխութիւնը: Պէտք է որ պարսիկ ժողովուրդը ըմբռնէ թէ իր ցեղային, քաղաքական ու քաղաքակրթական բոլոր շահերը կը պահանջեն որ հայ ժողովրդին հետ եղբայրաբար ապրի եւ վարգանայ:

Պարսկաստանի Հայերը պէտք է որ ա՛յնքան հոգ ատնին պարսիկ ժողովրդին մտաւորական զարգացմանը որքան իրենց սեփական յառաջդիմութեանը, որովհետեւ եթէ Հայերը քաղաքակրթական ուրոյն եւ արագ շարժում մը իրականացնեն՝ Պարսիկ ժողովրդին մոլեռանդ ու եւրոպատեսաց անշարժութեանը մէջ, հաւասարակշռութեան խցում մը յառաջ կուդայ եւ Պարսիկները առաւել քան երբեք թշնամի կը դարձընէ իրենց հայ բնակակիցներուն: Մինչդեռ ընդհակառակն երբ Պարսիկները տեսնեն որ Հայերը այնքան եռանդով կ'աշխատին ընդհանուր Պարսկաստանի բարձրացման որքան իրենց աղգային զարգացման, անկեղծօրէն պիտի յարին ու կապուին անոնց հետ, որովհետեւ քաղաքական պառակտումի տեւէ ապագայ վտանգ պիտի չտեսնեն Հայոց մէջ եւ իրենց համակրութիւններն անոնց համար խորունկ ու տեւական պիտի ըլլան:

Պէտք է որ պարսկագէտ Հայերը պարսկերէն հրատարակութիւններու ձեռնարկին՝ պարսիկ ժողովուրդին միաքն այս ուղղութեամբ լուսաւորելու համար, ու եւրոպական լեզուներով ուսումնասիրութիւններ ի լոյս ընծայեն՝ երկու ցեղերուն դաշնակցութիւնը պատմականօրէն բացատրող: Պէտք է մանաւանդ որ Պարսկաստանի մէջ ու մանաւանդ եւրոպական համալսարաններուն մէջ, պարսիկ ու հայ ուսանողները մօտենան իրարու, սորվին զիրար ճանչնալ, իրար սիրել, իրարու օգնել՝ մտաւոր ու բարոյական զարգացման մէջ, փարատել թիւրիմացութիւնները, նախապաշարութիւններն ու մոլեռանդ աւանդականութեան

մը հետեւանք եղող ատելութիւնները, եւ միասին պատրաստուին այն քաղաքակրթական դործին որուն պիտի նուիրուին վաղը՝ Պարսկաստանի վերանորոգումին եւ պարսկահըպատակ Հայութեան բարոյական բարգաւաճումին զուգահաճոյն նպատակը իրագործելու համար :

Ա. 2.

ՌՆԱՅՆ ԿՈՉԸ  
— 00 —

Իրենց վեհապետին ճառերէն խրախուսուած, Գերմանացիք արեւմտեան քաղաքակրթութեան մէկ քանի եզակի օրինակներ կը փոխադրեն Չինաստան : Բազմաթիւ չինացի բնատարկեալներ մազերնուն պոչէն իրարու կը կապեն, կը բռնադատեն զանոնք որ հրացանի բռնուեցնէն առաջ ձեռքովն իրենց փոսը փորեն, եւ մահուան աղատումը կը շնորհեն անոնց երբ իրենց դանակոծուած մորթը բլիկ բլիկ է եղած : Ազգաց իրաւունքներու ոչ մէկ կանոնը չեն յարգեր :

Տեսականօրէն, թէզը կրնայ արդարանալի դառնալ. բայց գործնականին մէջ, զինուորականները գործին դիտաւորութիւնները բոլորովին կը ստորնացնեն : Գաղթականային զինուորներու մոլեկանութիւններն անով մանաւանդ անպատեհ կը թուին Չինաստանի մէջ՝ որ այնտեղի միջին դասակարգերը Եւրոպայի միեւնոյն դասակարգերէն բարձր են մտքով. գրգերու տարածումը, արուեստներու եւ զբոսբանայի պաշտամունքը, համաստուածման փիլիսոփայութիւնը, զարդական զեղեցկութեան սէրը որ պարտէզներու խնամոտ կարգաւորմանը մէջ կը յայտնուի, ընդհանուր Իմացականութեան մը բոլոր այս նշանները՝ աւելի մեծ թուով կը հաշուեն Բէյ-Հոյի եւ Նանկ-Յէի ափունքներուն քան Սբրէի, Սենի եւ թէյմիզի ափունքներուն վրայ : Այդ զբահրմուտ պուրժուաները հեզնութեամբ յազենալուն իմանալով թէ ի՞նչ եղանակով գերման զուգազը մեր բարոյականին սկզբունքները կ'ապացուցանէ : Երբ լրարբերներն անոնց վերգարձած երդիքներով տուներուն մէջ անոր

սիրագործութիւնները պատմեն, օտարին վրայ մեր դաղափարներուն դերադանցութեանը համբաւն խկոյն կ'իյնայ կը կործանի ունկնդիրներուն մտքին մէջ, մանաւանդ եթէ քիչ յետոյ տեղեկացնեն թէ այդ միեւնոյն Գերմանիային մէջ տ'Առանպեր իշխանը չեռ նոր ծածուկ կերպով մահուան դատապարտուեցաւ : Ափրիկէի մէջ իր գործած վայրագութիւններուն համար : Թէպէտ այսօր բուսական հակամէտ հեռագիր, հեռաձայն, անգլիական էքսիբիցներ, սթիմըրներ եւ մեր վաճառականական սխտեմները գործածելու, Չինացւոց զարգացեալ մասը այլեւս ոչ մէկ ջանք պիտի չփորձէ իր դիւահարները, խուժանը եւ քաղաքականութեամբ վարակուած Պոքսըրները խաղաղասիրական ձգտմանց առաջնորդելու համար, քանի որ Գրիստոսի բանակները կը նուիրագործեն ճիշդ այն անպթութիւնը զոր միսիոնարները կը մեղադրեն Սաքիա-Մուսիի հետեւողներուն : Մեր զննապետներն Արեւելքի ժողովուրդներուն առջեւ մեր երէցն ու մեր վանականը սուտ կը հանեն : Մեր զօրավարներն իրենց ստորակարգեալներուն խժգժութիւններովը կը հաստատեն կեղծաւորութեան ու ստախոսութեան ամբաստանութիւնները զոր Արեւմուտքի հակառակորդները կը տարածեն : Վիլհելմ Բ. ի ճառը յանկարծակի հերքեց Սաչին վարդապետութիւնը : Որքան ալ նրբամիտ ըլլայ չինական զարգացեալ դասը, չպիտի կարենայ լաւ բացատրել իրողութեանց ու սկզբունքներու միջեւ երեւցող այս հակասութիւնը : Իրենց բանտարկեալները չարչրկելով՝ տեստոն տասնապետներն իրենց հաւանութիւնը տուած կ'ըլլան Բեքինի եւրոպական զեպանատուներու պաշարումին ու պատոն տը Գէթլըրի սպանումին, քանի որ ճիշդ միեւնոյն ձեւով կը բռնաբարեն ազգերու իրաւունքը, որուն վրայ հիմնուեցան մեր զբկած վերջնադրերը : Առ ի չգոյէ այլասիրութեան, գոնէ խոհեմութիւնը պարտք կը դնէ որ Չինաստանը եւրոպացիներու համար ուրիշ միջոցներ գործածուին : Չորս հարիւր միլիոն Չինացիները պիտի կրնան՝ տասը, քսան կամ երեսուն տարուան մէջ՝ հիմակուանէն տարբեր զինուորական ուժ մը գոյացնել, ճիշտ անոր համար որ մեր գործելու եղանակը այս դէպքերէն յետոյ այլեւս իրենց անհանդուրժելի պիտի երեւայ : Որովհետեւ ոչ մէկ բարոյական գերազանցութիւն պիտի չգտնուի որ աշխարհական բրտութիւնները մեղմացնէ իրենց աչ-

քին, ամէն կրցածնին պիտի ընեն պատրաստուելու համար պարտաւորիչ ազդեցութեան մը լուծը թօթափելու: Ամէն մէկ հրացանի կոթի հարուած որ հիմա կ'ըջնէ չինական ուսերու վրայ, անշուշտ կը պատրաստէ անհամար սպանութիւնները վրիժառութեան մը որ մեր յաջորդներուն գլխուն պիտի պայթի, կամ նոյն իսկ մեր ծերութեան ատենը, մընչեւ մեր ոստաններուն մէջ ուր այժմ անարգել կը զանգանան դիւրին հպարտութեամբ մը յղիացած մեր ցեղերը:

Փոխանակ եկեղեցական ազատութիւններու ջնջմանը յամառ անմտութեամբ մը հետամուտ ըլլալով ժամանակին արժէքը կորսնցնելու, մեր խորհրդարանականները շատ պատեհ գործ մը կատարած կ'ըլլային եթէ հարցապնդում մը ընէին դեղինները հատուցելէն յառաջ դալիք վտանգին վրայօք: Հանրապետութիւնը պարտաւոր է այս յարգանքի հարկը մատուցանել իր սկզբունքներուն: Պ. Վինեէ տ'Օքթօն, որ նախարարներուն հարցում մը պիտի ուղղէ այն ջարդի խաղերուն վրայ որոնց մէջ փայտեցան Վուլէ եւ Շանուան, անպատեհ բան մը ըրած պիտի չըլլար եթէ իր ճառին խառնէր խնդրանք մը Վիլիելմ կայսեր մօտ միջամտելու՝ որ պէս զի ոռոմանիսի կոչկոճանքներու համար իր տեստնեան յարումը չափաւորէ: Ֆրանսացիին կը վայելէ այս դերը ստանձնել, գործուելու վրայ եղող ամէն անարդարութեան դէմ բողոք բառնալ եւ աշխարհի առջեւ իր պաշտօնին նշանակութիւնը պահպանել:

Ամօթ է որ խորհրդարանին վերաբացմանը, ոչ մէկ ձայն չբարձրանայ նշաւակելու համար վարմունքը լորտ Ռոպերթսին, որ Պօէրնբրուն ազարակները կ'այրէ: արտերը կ'աւրչտկէ, եւ ամուրթեան կը վերագարծրնէ հող մը զոր աշխատութեան սուրբ յաղթանակը բնական ուժերուն ձեռքէն խլեց: Մարդուս սիրտը կը ճմլուի մտածելով թէ երեսփոխաններու եւ ձերակուտականներու այդ ամբոխէն ոչ մէկ ձիչ պիտի չարձակուի որ՝ յանուն գիտութեան ու մարդկային իրաւանց՝ այդպիսի անղգամութիւնները դատապարտէ:

Ամէն կողմէ վախկոտ խորհուրդներ կ'իմանանք որ կը պաղտաին խանդավառներուն՝ Բըրիկերի գալուստը համակրութեան ցոյցերով չողջունել: Ամէն կողմէ պատաւ կնկան պէս կը թզկան ու կը դողդղան: Մեր երկրին մէկ ծայրէն միւսը, ակաւները կը կափկափին ու ծնկուրներն իրարու կը զարնուին՝ լոկ գն:

զտիարն աչքի առջեւ բերելով մեծ վասնդին: Որքան որ անօգուտ է զիւանագէտներու վէճերը պաշտպանելու համար ձեռնարկուած պատերազմ մը, այնքան սուրբ ու պատմութեան էջերուն մէջ վսեմ պիտի դառնար անարդարութեանէն զոլուած ու անոր դէմ զէնք բարձրացնող ազնիւ ազգի մը բարկութիւնը:

Խաչակրութեանց ժողովուրդ, Պուվինի ժողովուրդ, Յեղափոխութեան ժողովուրդ, ժողովուրդ ժեմարի, Վալմիի, Օսթերլիցի եւ Վակրամի, ժողովուրդ Նալարենի եւ Սոլթերիոյի, ի՞նչ ըրիր քու մեծութիւնդ ու սրտոտութիւնդ:

Անշուշտ, զանոնք կորսնցուցիր «մանիլ» խաղալով, կապելային փակչտան սեղանին առջեւ, ուր կ'ապուշնայ քու զօրութիւնդ որ կէս դարէ ի վեր ազտոտ խաւաքարտներ տըխմարօրէն դարձրնելէ ուրիշ բան չ'ըներ, մինչդեռ ապսէնթ հոտող շունչդ կլիթիկէ կլիթիկ կը զգայոյի: Ամէն տեղ տկարներ կը խողխողուին: կը ջարդեն, կը կողոպտեն, կը հրգեհեն: Եւ դաւն սրճարանին բազրոնակին վրայ կը մօրանաս, կամ ակուսին թիկնաթուին մէջ՝ հեծկտուկներդ ալքօլի մէջ ըմբոշխնելով:

Երեսուն տարիէ ի վեր քեզ զինուորական համազգեստներով կը պաճուճեն, քեզ թուրերու կը կապեն, պայուսակներու եւ փամփշտակակներու կը հանգուցեն: Նոյն իսկ եթէ հաստ փոր մը ունենաս ու կարճ սրունքներ՝ լայնչի իրանի մը տակ, եւ ծփանուտ այտերով խոշոր երես մը, նորէն զլուխդ կարմիր քերի մը դրին, քսանըութը կամ տասերեք օրի չափ քեզ քափոթի մը մէջ փակեցին, քեզի սորվեցուցին աջ կամ ձախ դառնալ, կշռականօրէն քալել, սուինդ օդին մէջ ցցել: Սրճարանին մէջ հայրենիքիդ խօսքը կ'ընես՝ արիւնալից աչքեր թաւալելով, ու ընտրողական մասնախումբին ժողովներուն մէջ, ուր ամենէն շատ վճարողին կուտաս քուէդ, ալգային կորովի մասին կը ճառես, եկեղծի (կորով) բառին «ո»երը բազմապատկելով: Բայց քու հայրենիքդ, տկարներուն ու կեղեքուածներուն պաշտպանութիւնն է, Մարդկային Իրաւանց Յայտարարութիւնն է, քու պօ՛պդ է որ Հարաւէն Հիւսիս կը սլանար արիւնոտ բերնով մը ազատութեան անունն աղաղակելու համար: Բու հայրենիքդ արդարութեան համար մարտիրոսութիւնն է, քու մեծ հա՛յրդ է որ 1830ին «պատիքատ»ներուն վրայ ինկաւ՝ զուիցերացի՝ պահակներուն գնդակին տակ, որովհետեւ Պուրպոննե-

լուսն չնեղեց Սպանիոյ ազատականներուն դէմ  
 Ֆերաինանի բռնապետութեանը օգնած ըլլալ-  
 նին : Քու հայրդ է , որ , զեռ պատանի , 1848ին  
 միեւնոյն գործը կը վերսկսէր , Եւրոպայի ու-  
 րէն տալու համար 1870ի գեղեցկութիւնը՝  
 Ազգային ժողովին մէջ վերակենդանացած :  
 Ի՞նչպէս , Լա Հէի Դեպտանախորհուրդը քաղա-  
 քակիրթ աշխարհին առջարկեց որ քրիստո-  
 նեայ ժողովուրդներուն միջեւ ծագող վէճերն  
 այլեւս պատերազմով չլուծուին , այլ իրաւա-  
 բարութեամբ : Արդ , զինովի խեղութիւնով մը ,  
 Փալսթաֆ կը մերժէ այդ վճռին հնազանդի-  
 հարիւր ութսուն հազար զինուոր կ'արձակէ  
 երեսուն հազար զեղջուկի դէմ որոնք միայն  
 այդ գերագոյն դատարանին առջեւ կ'ուզեն  
 զլուխ ծոել , միա՛կը որ արգար պիտի ըլլայ եւ  
 բոլոր իմաստասիրութեանց , գիտութեանց ,  
 քսան դարէ ի վեր կատարուած ամբողջ մը-  
 տաւորական աշխատանքին , հազար ութը հար-  
 իւր տարիներէ ի վեր ընդունուած բոլոր կը-  
 րօնքներուն արժանի : Եւ Ֆրանսան մէկ հա-  
 բուածով ոտքի չ'ե՛լլեր , այդ գաղափարին  
 համար պայքարի մտնելու պատրաստ , նոյն իսկ  
 եթէ ատոր հետեւանքով իր ուսանաներուն  
 փլատակին ու իր ցեղերուն արիւնին մէջ թա-  
 զուի կորսուի : Ու Ֆրանսան կը հանդուրժէ՞  
 որ բարբարոս Վիքինկներու խաժամուժ մը  
 ծափահարէ դահիճները զոր ինքն իսկ Ափրիկէ  
 զրկեց՝ մէկ արդարին դէմ վեց լիկիչ հանելով :  
 Եւ դո՛ւն , Վալմիի հերօսներուն թողը , Բարի-  
 զէն ձիպրալթար չցառքեցի՞ր՝ հեղզ Սպա-  
 նիային մէջէն , որպէս զի պատժես բարբա-  
 րոսները , գաղափարին ոտնաները , կամ վեհա-  
 շուք կերպով կործանիս :

Պատիկ սրճարանիդ մէջ կը շարունակես մը-  
 նալ շաքարով ապսէնթիդ առջեւ , « թուէֆլ » ի  
 « մանիլոն » ին սպասելով , կոճակդ փորիդ վրայ  
 թուլցուցած , ո՛վ Ֆրանսա :

Ո՞ր սրբափողը քեզ պիտի արթնցնէ այդ ընդար-  
 մացումէդ , Ակա՛նջ զիր տկարներուն լացին :  
 Քու անուկնովդ , վատեր , Մայրագոյն-Արիւնլիքի  
 մէջ , գերի բռնուողները կը սպաննեն : Թուրքը  
 Հայը կը մորթէ . Անգլիացին Պօէրին աղարակը  
 կը հրդեհէ : Քու եռագոյն դրօշիդ երանգներուն  
 սակ , Եանուաններն ու Վուլէները սեւա-  
 մորթներ կը ջարդեն՝ ո եւ է Սթենլիի մը  
 օրինակին հետեւելով : Մէկ բեւե ոչն միւսը  
 արդարութեւնը կը հոնտայ : Եւ դուն խաղի  
 թուղթը կը կտրես , ծխափողիդ նիքոթինը ծը-  
 ծելով՝ կպչուն լորձունքդ հեռուն ժայթքելէ  
 առաջ :

Եւ սակայն զէնքերը կը կուտակուին զինա-  
 րաններուդ մէջ : Դանձարանդ ճոխ է : Ընկերա-  
 կան յոյսը երազներդ կը յուզէ : Ինչո՞ւ օրի-  
 նակ չես հանդիսանար աղգերուն , ինչ որ քու  
 ճակատաշիրդ է : Չէ՞ որ եղբայրութիւնը ա-  
 ճած է Եւրոպայի , նոյն իսկ Անգլիոյ եւ Գեր-  
 մանիոյ , գործաւոր դասի հոգիներուն մէջ :  
 Դերման ընկերվարական լրագիրը , « Արովերց » ը ,  
 ամենէն առաջ ոռնաց իր մոլեգին գայրոյթը  
 իր ցեղին ապիրատներուն դէմ որոնք զե-  
 ղինները կը խոչտանգէին : Երէկ , բրիտա-  
 նական բանւորներու պատուիրակները Բա-  
 բիլի մէջ Չէմպրէյնի բանակը կը դատապար-  
 տէին եւ Ֆրանսայի բանւորներուն կը միանա-  
 յին միահաղոյն բանադրանքով մը զայն նշա-  
 ւակելու համար : Հոլանտան դժուարաւ կը  
 կը զպէ իր ամբոխներուն վրիժատենչ յափըշ-  
 տակութիւնը : Եթէ Ֆրանսա ցցուի , իր խոյան-  
 քին ետեւէն պիտի քաշէ աշխատաւոր կորով-  
 ները . ժողովուրդներուն դէմ չէ որ պէտք է պա-  
 տերազմի ելլել , այլ բռնաւորներուն եւ իրենց  
 ծառաներուն դէմ , ինչպէս 93ի դեցազնական  
 շրջանին :

Ահա երեսուն տարի է որ շուարած կը դող-  
 գղանք եւ գինետուններու խորը լուրիցած ըստ-  
 բուկներու կեանք մը կը վարենք : Ա՛լ ատենը  
 չէ՞ որ նորէն հագնինք հանդիսութեանց համա-  
 զրեատը զոր պատմութիւնը մեզի փոխ տուած  
 է : Ատենը չէ՞ որ բողոքող ձայներ բարձ-  
 րանան երբ ոմանց անգլթութիւնն ու ցածու-  
 թիւնը կը հերքեն հեռուն ապագային առջեւ  
 մեր տիեզերական արդարութեան ու եղբայ-  
 րութեան իտէալը : Պէտք չէ՞ որ քաղքենի մը  
 բողոքէ , Սորբրգարանին մէջ , յանուն Ֆրան-  
 սական մտայնութեան , նոյն իսկ եթէ իր ճա-  
 ուր , լսելի ըլլալու համար , ստիպուած ըլլայ  
 ժողովրդական ապստամբութեան ովկիանական  
 մրմուռքին , ձիերու խիւնջիւնին ու հրացա-  
 նի կոթերու թնդիւնին միանալ :

Ապա թէ ոչ անօգուտ էր գետին ավերուն  
 վրայ կանգնած շլալ արուեստական ընդար-  
 ձակ ոստանը , ուր ժողովուրդներու ճարտարա-  
 պետական դրոշմները կը խառնամառնին , ուր  
 անոնց երաժշտական ընկերութիւններուն նը-  
 ւագածութիւնները միասին կը հնչեն , ուր ա-  
 նոնց դրօշները՝ քովէ քով՝ կը վէտվէտին ան-  
 դադար : Ինչի՞ ծառայած պիտի ըլլայ միջազ-  
 գային այլասիրութեան այս կնիքը , եթէ մենք  
 մեզ չբռնադատենք կեանքը , արգասաբեր ու  
 յուրթի կեանքը յարգելու , եթէ թողունք որ

մեր Եւրոպայի եղբայրները երկու կիսագուն-տերուն մէջ բարբարոսութիւն տարածեն :

Ֆրանսա՛, այս իրիկուն կրթնէ՛, քու Բարիզիդ մէջ, այն կամրջակին վրայ որ գետափներուն զուգընթաց կանաչութիւններն իրարու կը միացնէ : Դիտէ՛ Ղժայլանքով ինչ որ ստեղծեցիր այդ պլպլուն աստղերու զարմանահրաշ կամարը՝ մանուշակագոյն գոհարներով յեւեալ երկու անսահման սիւներուն մէջտեղը կորացած, եւ որ չլացումներու դուռն է որու տակէն բոլոր ժողովուրդները եկան անցան՝ համայնական գործը տեսնելու համար : Նայուածքդ երկարէ՛ մինչեւ այն խարտիչափայլ երկու պիւլոնները որոնք Եւրոպայի Արեւելքին ու Արեւմուտքին Նիզակակցութեան կամուրջը կը վերջաւորեն : Դիտէ՛ անհամար լապտերները կառքերուն որ գիշերային գետին վրայէն ցաաքող կամարներուն կատարէն կը սուրան, ու ջուրին փոթերը՝ որ ծիրանթոյր խոշոր աչքերով լուսասփիւռ նաւերուն անցքէն կը ջղաձգուին : Համրէ՛ ցանուցիր բազմութիւնը կանթիղներուն որոնք ծառերու տերեւներն ի վար կախուած են, ոսկի շիթեր, արիւնի շիթեր, որ կը դողդոջեն անձայրածիւր պալատի մը ներքսակողմին երեւոյթն ունեցող յղկեալ եւ ուղղադիժ քաղաքին մէջ : Աչքովդ հետեւէ՛ լուսիկներուն ու ստուերներուն, եւ հեռուն՝ մութ ալեծփանքներուն՝ իրարանցումին, ու երկնքին անորոշ ու խորունկ գորշութեանը տակ լուսովառ կառքերուն սլացքին : Ականջ դի՛ր քու կախարդ որդիներու զմայնաներովն իրագործուած սա աներեւակայելի զիւթախաղին բղղիւնին : Այս բոլորը, քու ազատասէր մտքիդ կնիքն է՝ երկրագունդին վրայ գրոշմուած : Այդ կնիքը պարտք մը կը դնէ քու վրայ : Ան կ'ապացուցանէ ուժն այն երզումին զոր դուն ատենով Գնդախաղի սրահին մէջ արտասանեցիր, աւարտելու համար ձեռնարկը Քրիստոսին որ ստրուկներուն կապանքներն արձակեց եւ «Եղբայրս ես» ըսաւ զերթին ինչպէս բորտին : Մասձէ՛ այն ատեն թէ դուն կարող ես թոյլ տալ որ անարդարութիւնը շարունակէ մեր սիրոյ բազմանքները յուսահատեցնել : Եւ եթէ այդ ճարտապետական լոյսերու կնիքը չփչրես, քու դիւցազնուհի մտածումդ բարձրաձայն աղաղակէ՛ : Ծո՛ւրջդ կանչէ քու բազմութիւ զաւակներդ՝ խրոխտ ու խանդավառ, եւ հրամայէ՛ աշխարհիս՝ ընդգրկել անգին եղբայրութիւնը :

ԲՈՒ ԱՍՏՆ

Լը Ժուռնալ  
8, Նոյեմբեր 1900

Այս յօդուածին երեւման օրը, հետեւեալ երկտողը զրկեցի Բոլ Ատանին : «Պարոն, չեմ կրնար ինքզինքս արգելել ձեզի յայտնելու այն բարձր հրճուանքը զոր զգացի ձեր այսօրուան յօդուածը կարգալով : Ամենէն վեհանձն, ամենէն թրթռուն, ամենէն «Ֆրանսական» էջերէն մէկն է որ երբեք տեսած ըլլամ : Պիտի հրատարակեմ անոր հայերէն թարգմանութիւնը «Անահիտ» ամսաթերթիս մէջ, — ուր արդէն հրատարակած եմ Սաղազութեան Համաժողովին աթիւ ձեր դրած մէկ քանի աղնուողի յօդուածներուն թարգմանութիւնը, — եւ վստահ եմ որ անոր ընթերցումը պիտի կազդուրէ հայ ընթերցողները, որոնք կը ցանկան Ֆրանսան միշտ տեսնել այնպէս ինչպէս դուք զինքը կը հրաւիրէք որ ըլլայ վերստին » Բոլ Ատան հետեւեալ պատասխանն ուղարկեց : «Շնորհակալ եմ, պարոն, զիս փառաւոր կը կացուցանէք. ձեզի կը զրկեմ իմ լաւագոյն մաղթանքներս : »

Յօդուածը, իրօք, ամենէն շքեղ էջերէն մէկն է այդ խորաթափանց ու ջղուտ գրադէտին, այդ ամէն կուսակցութիւնէ, ամէն աղանդէ, ամէն վաղանցուկ յարարերականութիւններէ բարձր հայեցակէտէ մը իրերը զիտող խրատի ու ազնիւ մտածողին որ Բոլ Ատանն է, եւ ամենէն անկեղծ, ամենէն հօգոր ու ամենէն յուզիչ կոչը որ այս տագնապի ու չփոթութեան օրերուն մէջ ճշմարտապէս Ֆրանսայի սիրտ մը ուղղած ըլլայ իր հայրենիքին :

Միակ դիտողութիւնը զոր կարելի է ընել այս էջին, այն է որ հեղինակը, ցաւագին յոռետեսութեամբ մը, «ունայն» համարած ըլլայ իր կոչը : «Դարավերջի Ֆրանսան» տիւտով ուսումնասիրութեան մը մէջ, ողջունած էի բարոյական զարթումի այն հոյակապ երեւոյթը որ Ֆրանսայի մէջ յայտնուեցաւ այս վերջին մէկ քանի տարիներս. միշտ կը յամառիմ հաստքիս մէջ՝ այդ զարթումին ի որութեանն ու տեւականութեանը նկատմամբ. որքան ալ խոչընդոտները զես բազմութիւ ըլլան վերականգնումի ճիգին առջեւ, որքան ալ սաժանելի ու թերեւս երկարատեւ ըլլայ պայքարը զոր պէտք է մղեն ազատականները հընամոլներուն փաղանդին զէմ, եւ կը կարծեմ թէ այս աղղը, որուն կեանքին մէջ ընկերական հարցերը, բարոյական խնդիրները կարեւորագոյն սեղը կը բռնեն այժմ եւ որուն Բոլ

Ատաններն իսկ, որոնք պ'իճ բայց եսական ու հանրային կեանքին արհամարհոս քմայքի մը արուեստագէտներն ըլլալով սկսած էին, «մարդկային» մտահոգութիւններու է որ գըլխաւորապէս կը նուիրեն հիմա իրենց տաղանդին ուղեւորութեան, սահմանուած է յաղթել զինքը հեզձամահ ընել փորձող մուսլ ազգեցութիւններուն ու նորէն դառնալ այն գերազանցապէս «գաղափարապաշտ» ու «մարդկութեան համար ապրող ու գործող» ազգը, զոր բոլոր ցեղերը պաշտեցին: Եւ արդէն, զէպքերը հերքեցին Ատանի յոռետեսութիւնը: Մերունի Գրիւկէրը, որուն առջեւ գարշիլի Վիլհելմն իր գոնեքը կոպտաբար փակեց, Պրանսայի մէջ է որ նորէն գտաւ խանդավառ ու սրտագին համակրութիւնը զոր կուգար փընաւընել Եւրոպայի ժողովուրդներուն մօտ՝ իր դասին համար, որուն արդէն իր կեանքը գայած էր զոհել Ֆրանսացի զինուորական մը, Վիլպուա-Մառէօյլ գնդապետը՝ բազմաթիւ Ֆրանսացի կամաւորներու հետ: Պրանսացի ժողովուրդը՝ մէկ սիրտ գարձած՝ միահաղոյն բարախեց Գրիւկէրին հանդէպ, ու Ֆրանսական կառավարութիւնը զայն ընդունեցաւ ինչպէս անկախ ազգի մը վեհապետը: Անշուշտ, կառավարութիւնը Ատանի ծայրայեղօրէն վեհանձն տեսչանքին իրականացում աւուր չափ հետուն չգնաց եւ չուղեց «հրացանի կոթերութիւնը խառնել» ժողովրդական բողոքին. ու արդէկ ըրաւ. որովհետեւ ինչքան ալ յանցաւոր ըլլայ անգլիական կառավարութիւնն այս խնդրոյն մէջ, Պրանսա պէտք չէ որ իբրեւ թշնամի մը ցցուի իր մեծ գրացիին, անգլիացի ազգին դէմ, որուն հետ օր մը իր համաձայն գործակցելը քաղաքակրթութեան համար մեծագոյն բարեքը պիտի ըլլայ: Պրանսա պէտք էր որ իր բողոքը հանդիսաւորապէս արտայայտէր «Զէմպրլէյնի կառավարութեան ուճիւրն զէմ», եւ ըրաւ զայդ հոյակապօրէն. իր «գիւցազնուհիի մտածումը բարձրաձայն ազաղակեց »

Եւ պէտք չէ կարծել թէ ատի սին աղմուկ մըն էր լոկ՝ անկարող ո եւ է գրական հետեւանք ունենալու: Պրանսայի ցոյցէն անմիջապէս յետոյ, Զէմպրլէյն իր լեզուն փոխեց ու գգուական, գրեթէ հաշտարար բառեր ուղղեց Պօէրներուն՝ նշանակալից ճառի մը մէջ. եւ ո՞վ գիտէ թէ այն կորովի ու գիւցազնութեան բազմապատկումին մէջ զոր Պօէրները ամսէ մը ի վեր ցոյց կուտան, Պրան-

սայի ներշնչած այդ մեծ խրախուսանքն իր ազդեցութեան կարեւոր բաժինը չունի: Ասկից գտաւ, Պրանսայի վարմունքը երկու աշխարհներուն մէջ արձագանք գտաւ, բոլոր ժողովուրդներն իրենց ծափերովն ողջունեցին զայն ու սրտանց անոր համազգաց ըլլալին հուշակեցին. Պրանսան այսպէս անգամ մըն ալ աշխարհի թատերաբեմին առջեւ ուղեցոյցի դերն ապրող ազգի ճակատագրին հաւատարիմ մնաց:

Չենք գիտեր թէ ի՞նչ պիտի ըլլայ վախճանը այս տուամին որուն հինգերորդ արարն սկսած է արդէն: Ես հիացող մըն եմ Անգլիային, բայց ոչ այն Անգլիային որ անտարբեր թողուց Հայերը քարոզել եւ որ հիմա կ'ուղէ Պօէրները ջնջել: Ես կը բաղձամ որ չջախջախուի Պօէրներուն դատը, որ բոլոր ազատութիւն ստանալ ցանկացող ազգութիւններուն դատն է. կը բաղձամ որ Պօէրները դեռ երկար ատեն յաջողին շարունակել իրենց կուռ դիմադրութիւնը, եւ անգլիական ազգը զգայ իր արդի կառավարութեան սխալը, սըրբազրէ զայն, եւ իր ինքնաբեր որոշումովը վերջ դնէ այդ ամօթալից պատերազմին ու երկուստեք զիջումներով հարցը լուծուի: Այդպէս ըրաւ. ասե՛նօք, մեծ կլատսթոնը՝ միեւնոյն Պօէրներուն հանդէպ: Եւ այն Անգլիան զոր կը սիրեմ, կլատսթոնի Անգլիան է:

Ինչ ալ ըլլայ տուամին վախճանը, Պօէրներունն է ապագան: Նոյն իսկ եթէ իրենց անկախութիւնը կորսնցնեն, Պօէրներուն դատը կորսուած չի կրնար համարուել: Պօէրները իրենց քաջութիւնովը գերազանցեցին նոյն իսկ Հելլենները որ Պարսից վիթխարի զօրութեանը յաղթեցին: Իրենց ընթացքը զիրենք մարդկային վեհագոյն ազգերուն կարգը կը դասէ: Աշխարհիս համարումին մէջ՝ իրենք յաւիտենական անկախութեան արժանի են: Հարաւային Ափրիկէի բոլոր ճերմակ ցեղէնակիւնները, — բաց ի Անգլիացիներէն, որոնք փոքրամասնութիւնն են, — սրտով իրենց հետ են: Նոյն իսկ եթէ ընկճուին թշնամուոյն թիււի մեծամասնութիւնն ու լոկ ինքնավարութիւն մը պահեն, իրենց ազգայնութիւնը անկորուստ պիտի մնայ՝ այս պատերազմին դիւցազնական յիշատակներովը յաւերժացած, եւ Հարաւային Ափրիկէի բարոյական ուրապետութիւնը ճակատագրականապէս իրենց է սահմանուած, սպասելով քաղաքական տիրա-

պետութեան որ օր մը կրնայ գալ : Իրենց այդ վեհ յիշատակներուն արձանատեարին մէջ, պօէր մարտիկներու քաջութիւններուն քով, Ֆրանսային մայրական խրախուսանքի ազդակը ամենէն գեղեցիկ էջերէն մէկը պիտի բռնէ :

2.



### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

**Գ. ԼՈՒՍԻՆԵՍՆԻ ՖՐԱՆՍԱԶՍ ՅԱՌԱՐԱՆԸ .**  
 — Այս բառարանը որ կուգայ աւելնալ Նորայրի, Նուպարեանի եւ Քաջունիի ծանօթ գործերուն վրայ, արժէքաւոր աշխատութիւն մըն է եւ խիստ պատուաբեր հեղինակին համար : Գործին առաջին հատորը որ մեր աչքին առջև ունինք եւ որ կը պարունակէ **A-H** գրերը միայն, 1080 մեծ կրեաներէ բաղկացած է եւ շատ աւելի ընդարձակ է քան Նորայրի ամբողջ բառգիրքը, որ մեծագոյնն էր մինչև հիմա երեւցած ֆրանսահայ բառարաններուն (չհաշուելով անշուշտ Քաջունիի երկհատոր հոյակապ աշխատութիւնը որ մասնագիտական գործ մըն է) : Հեղինակը իր այս երկասիրութեամբ նըւիրած է հայ գրականութեան գործ մը զոր կրնանք միակը համարել, քանզի վերոյիշեալ երեք բառարանները՝ որոնցմէ մեծապէս օգտուած է նոր հեղինակը, չունին այն ամբողջական կատարելութիւնը եւ ճշտութիւնը որ կը ներկայացնէ այս նոր բառգիրքը, որ թէ՛ գրական եւ թէ՛ գիտական մասերու միացմամբ անփասելի առաւելութիւն մը ունի իր երեք նախորդներուն վրայ : Գուխտոն Լուսինեանի բառարանը թէեւ ընդհանուր կերպով գրաբար յօրինուած՝ սակայն գրեթէ ամբողջ բառերու գիմաց գրուած են նաեւ աշխարհաբար բացատրութիւնները : Այնպէս որ ամբողջ գործը կրնանք համարել բովանդակութիւն մը Նորայրի եւ Նուպարեանի գործերուն, որոնց միացած է Քաջունի գործը իր գիտական բառերու մթերքովը, Ասով չենք ուզեր ըսել թէ ամբողջ գործը միմիայն խաացումն է այդ երկուսի հեղինակութեանց : Գուխտոն Լուսինեան յօրինած է նաեւ իր կողմէն շատ մը նորակերտ բառեր որոնցմէ ոմանք պիտի ընդունին գիւրաւ եւ գործածական զանաւն եւ

մէկ մասն ալ անշուշտ պիտի մերժուին իր բնականութեամբ անհերքաւորակ : Ինչ որ մեծագոյն արժէքը կը կազմէ այս գործին, այն զոհողութիւնն է որ ըրած է հեղինակը այդ տեսակ բազմածախս գործ մը հրապարակ հանելով . որովհետեւ պէտք է ի նկատի առնել թէ սոյն բառարանին հրատարակութիւնը Բարբղի մէջ, մաքուր տպագրութեամբ եւ ճոխ պատկերներով, նիւթական ծանր ձեռնարկ մըն է զոր չկրնար փոխարինել նոյն խի գրքերուն ամբողջական վաճառումը :

**Պ. ՄԱՐԻՅԵՒԻ ԲԱՆԱԽՍՈՒԹԻՒՆԸ .** — Պ. Լէոն Մարիյեի շատ գեղեցիկ բանախօսութիւն մը ըրաւ վերջերս հայկական խնդրոյն վրայ : Ահաւասիկ ինչ որ կը գրէ «Բրօ Արմէնիա» այդ մասին . «Աստիասիոն տը լա Բէ բառ լը Տոուա» ի վերջին բանախօսութիւնը տեղի ունեցաւ յունուար 28 երկուշաբթի իրիկուն, Սոսիթէ Սավանթի օթէլը, նախագահութեամբ՝ «Բուռ տ'Աբէլ» ի փաստաբան Պ. Ժուէի : Պ. Լէոն Մարիյեի իրեն նիւթ առած էր «Վացութիւնը Հայաստանի մէջ ու Եւրոպայի պարտականութիւնը» : Վհնդի բանախօսը որ 1896ին իսկ՝ գործուած ոճ իրներուն դէմ բողոք բարձաւ, մեծ զօքերով վերապատկերելէ յետոյ ջարդերու պատճառութիւնը, — Ուրֆա եւ իր եկեղեցին, Պոլսոյ փողոցները եւ բիրերով սպաննուած մարդիկը, Եւրոպայի թերեհաւատութիւնը, մէկ քանի խիղճերու յուզումնքը, զիւսնագիտական պատրուակները զոր կառավարութիւնները գործածեցին իրենց անշարժութիւնը արգարայնելու համար, Լուսինեանի իշխանին գերը յետոյ խոհեմ ջարդերը, անհատական սպանումը, հունձքերու ջնջումը, հաւաքական բանտարկութիւնները, արջառի գրաւումը, — այժմեան վախերը պարզեց, մեծ կոտորածի մը վերահասութիւնը, անհրաժեշտ պէտքը որ Եւրոպան գործէ անյապաղ, ցոյց տուաւ պարտաւորութիւնը զոր ունին Պերլինի զաշնատաւորութիւնը զոր ունին հաւանական նկատեց, զիրն ստորագրողները, հաւանական նկատեց, կարգ մը նշաններու եւ կարգ մը աղբիւրներու համեմատ, որ պետութեանց միջամտութիւն մը տեղի ունենայ : Բանախօսը բռն ծափեր ընդունեցաւ : Պ. Լիւսինեան Լը Ֆուայէ, քանի մը բառով շնորհակալ եղաւ «Բրօ Արմէնիա»ին ու նաեւ Պ. Չօպանեանին, այն աջակցութեան համար զոր առած էին այս հաւաքման կազմակերպումին, անգամ մը եւս յայտարարեց թէ «լա Բէ բառ լը Տոուա» հանգէսը պատ-

բաստ էր ընդունելի այն առաջնորդողները, տոբրեմանները կամ լուրերը զոր Հայոց պաշտպանները պիտի զրկեն անոր» :

Պ. Լէոն Մարի, եւ որոշած է հայկական խընդրոյն վրայ մանրամասն յիշատակագիր մը ներկայացնել կլասկոյի յառաջիկայ տարուան ճուցահանդէսին առթիւ այնտեղ դումարուելիք Սաղաղութեան Համաժողովին :

ԶԳՍՏՄՈՒՆՔ. — Թիֆլիսէն Պ. Գրիգոր Բալասեանց մեզի կ'իմացնէ թէ մտադիր է ի մօտոյ հրատարակել հանդէս մը (վեցամսեայ) «Զգացմունք» տիտղոսով : Այս հանդէսը պիտի պարունակէ միմիայն բանաստեղծութիւններ, եւ բանաստեղծութեանց քննադատութիւններ : Բաժանորդագրութիւնն է, տարեկան՝ երկու բուլլի : Դիմել հետեւեալ հասցէին .

M. Grégoire Balassiantz, Choulaver (Caucase, Russie)

ՇՈՏԻԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ. — Ֆիլիպէէն մեզի կը հաղորդեն թէ տեղւոյն ազգայիններէն Պ. Ա. Գրքքէսելեան պիտի հրատարակէ մօտ օրէն տետրակ մը «Շօտիէրի պատմութիւն»ը (Chaudière à vapeur) վերնագրին տակ . իրական կեանքէ առնուած :

Տետրակը լոյս պիտի տեսնէ նաև ֆրանսերէն, անգլիերէն, ղերմաներէն լեզուներով եւ ձրիաբար պիտի զրկուի ամէն ծանօթ հասցէներու :

Զրիապէս պիտի ստանան նաև ամին անոնք որ կը փափաքին ու իրենց հասցէն կը զրկեն Պ. Ա. Գրքքէսելեանին, Ֆիլիպէ :

ԳՈՒԹԱՆ. — Պ. Գարեգին Մեծատուրեան, չափազէտ-հողագործ՝ վկայեալ Բարիզի Երկրագործական վարժարանէն, այս օրերս հրատարակել սկսաւ Բարիզի մէջ, հողագործական ամսաթերթ մը, «Գուրթան» անունով : Այս թերթը պիտի ունենայ նաև ճարտարարուեստից ու գիտութեանց նուիրուած յօդուածներ եւ պիտի պարունակէ պատկերներ . Պ. Տիւքլօ, մեծանուն գիտունը եւ «Էնսթիթիլ Բասթէօ»ի անօրէնը, գնահատողական եւ խրախուսական գեղեցիկ նամակ մը զրկած է այս առթիւ Պ. Մեծատուրեանին, որ զայն հրատարակած է իր թերթին առաջին թիւին մէջ : Մեզի պէս ամէն բանէ առաջ «երկրագործ» ժողովրդի մէջ, երկրագործական թերթի մը հիմնարկութիւնը իրական ու կարեւոր պէտքի մը գոհացում տուող ձեռնարկ մըն է : Լիա-

լոյս ենք որ Պ. Մեծատուրեանի թերթը պիտի գտնէ այն յաջողութիւնը որուն արժանի է : Տարեկան բաժանորդագրինն է 12 ֆրանք . դիմել հետեւեալ հասցէին .

M. K. Médzadourian  
23, Rue de la Collégiale  
PARIS

ԿՈՉՆԱԿ. — Պոթոնի մէջ հայերէն չարաթաթերթ մը հիմնուած է, «Կոչնակ» : Այս հրատարակութիւնը, որուն գլուխը կը գտնուին Միացեալ Նահանգաց հայ գաղութին բողոքական տարրին մէկ քանի ներկայացուցիչներ, եւ որուն պիտի աշխատակցին օր . Ալիս Սթոն Պլաքուէլ եւ ուրիշ հայասէր Ամերիկացիներ, շատ լուրջ ու շատ ազնիւ ուղղութիւն մը երեւան կը բերէ իր առաջին թիւերէն իսկ, եւ անտարակոյս սիրալիր ընդունելութիւն մը գտնէ հայ հասարակութեան մէջ : Բաժանորդ գրուելի փափաքողները դիմելու են հետեւեալ հասցէին .

Miss Alice Stone Blackwell,  
3 Park street,  
U. S. A. BOSTON, MASS

ՄԱՄՈՒՐԵԱՆ ԵՒ ՏԻԿԻՆ ՏԻՒՍԱՔ. — Լբագիրները ծանուցին Տիկին Տիւսարը եւ Մասթէոս Մամուրեանի մասը : Ճառով կ'արտատու պենք այս լուրը : Երկու ազնիւ գէմքեր են որ կ'անհետանան : Երկուքն ալ իրենց գործը լրացուցած էին . եւ իրենց մահը նիւթական պակաս մը չի գոյացներ մեր գրական կեանքին մէջ, բայց այդ յարգուած գէմքերուն աներեւութեամբ խորին տխրութիւն մը կը պատճառէ մեզի : Տիկին Տիւսարի զրականութիւնը շատ թերութիւններ ունէր . բայց մեր առաջին կին գրողներէն մին ըլլալու արժանիքն ունեցաւ ինքը, եւ մեր բարքերուն եւրոպացման, հայ կնոջ գիրքին բարձրացման համար առաջին ջանքն ընող կինը եղաւ ան : Այդ դերը պիտի չմոռցուի : Մամուրեանի մասին մտադիր էինք իր յոբելեանին առթիւ հրատարակել ուսումնասիրութիւն մը : Զայն յապագէցինք, որովհետեւ կ'ուզէինք քննել Մամուրեանի ամբողջ գործը՝ իր հայրենասիրական ու քաղաքական մասերովը մէկտեղ, եւ մտածեցինք որ այդպիսի յօդուածի մը հրատարակումը կրնար վնասաբեր ըլլալ Թուրքիա ընակող անձի մը : Մեր յաջորդ թիւերէն մէկուն մէջ պիտի հրատարակենք այդ ուսումնասիրութիւնը :


**ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ .** — Փետրուար 9ի շաբաթ օրը Պ. Մաթիաս Տիւվալ կենսաբանական Ընկերութեան հաղորդեց Մանուէլեանի մէկ նոր աշխատութիւնը՝ «վերջաւորական ջղային նեարդները ուղղակին տանիքին կորիզին մէջ» :

**ՄՏԵՓԱՆ ԷԼՄԱՍ .** — Փետրուար 14ի հինգշաբթի իրիկունը , էսաբի սրահին մէջ, Պ. Ստեփան Էլմաս , հայազգի դաշնակահար մը , նուագահանդէս մը տուաւ , ուր իր հեղինակութիւններէն քսանի չափ զարկաւ : Պ. Էլմաս , զոր առաջին անգամ իմանալու պատեհութիւնը կ'ունենանք , Լիսթի աշակերտներէն է եւ շատ ճարտար , շատ փափուկ , շատ նուրբ արուեստագէտ մը : Իր կտորներէն ումարք , «պէսուօզը» , «նօքթիւռն»ը , «մազիւռքա»ն , «Առմէնիէն»ը , դոհարներ են քնքոյշ զգայութեան եւ գերանուրբ արուեստի : Պ. Էլմաս , որ եւրոպայի մէջ արդէն ծանօթ է եւ երաժշտական աշխարհին մէջ պատուաւոր տեղ մը կը գրաւէ , պէտք էր որ ճանչցուէր եւ զնահատուէր նաեւ իր հայրենակիցներէն Այս նուագահանդէսին , միմիայն Ֆրանսացիներ կային , եւ հազիւ երեք չորս Հայ : Պ. Էլմաս մտազիր է տարին անգամ մը Բարիկ նուագահանդէս մը տալ : 4ը յուսանք որ զայ տարի իր ունկնդիրներուն մէջ Պ. Էլմաս բազմաթիւ Հայեր ունենայ :

Մարտ 16ին Պ. Էլմաս պիտի մեկնի Լոնտոն ուր հրաւիրուած է նուագահանդէս մը տալու :

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀՍՅՈՑ ՀԱՄԱԺՈՂՈՎՐ .** — Ամերիկայի Հայերը , նախածեղծութեամբ Միացեալ-Նահանգաց Վերակազմեալ Հնչակեան մասնախումբին , վերջերս գումարեցին Համաժողով մը որ որոշեց կազմել միայուն մարմին մը Ամերիկայի Հայութիւնը ներկայացնող , զայն կազմելու համար յանձնախումբ մը կարգուած է արդէն : Համաժողովը որոշած է որ այդ մարմինը յիշատակագիր մը պիտի զրկէ Պերլինի դաշնագիրն ստորագրող վեց պետութեանց , շնորհակալութեան ուղերձ մը «Բրօ Արմէնիա»յի խճագրութեան եւ միանգամայն դրամական նպաստ , ու Հայերը Ամերիկացւոց ճանչցնելու համար ջանքեր պիտի ձեռնարկէ : Կը մաղթենք որ այս գեղեցիկ ծրագիրները ծրագրի վիճակի մէջ չմնան :

**ՆԱՐԵԿԱՑԻՎՐԱՅ 307-ՈՒԱՃ ՄԸ .** — «Մեղքիւ առ Ֆրանս» ամսաթերթը իր 1900ի նոյեմբերի թիւին մէջ հրատարակեց Ա. Զօպանեանի մէկ ուսումնասիրութիւնը Գրիգոր Նարեկացիի մասին :



**ԳՐՔԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ**

— 0 —

**Լ'ԱՐՄԵՆԻ .** — Պ. Չերալ այն մտքերէն է որ երբ անգամ մը «2 անգամ 2ը 5 կ'ընէ» ըսած գտնուին , յախտեան պիտի յամառին իրենց ըսածն անսխալ յայտարարելու : Բայց այս սխտեմին գործադրութեանը մէջ , Պ. Չերալ ի յայտ կը բերէ միամիտ ժողովութիւն մը որ սրտաշարժ է : Այսպէս , տակաւին չի քաշուիր պնդելու թէ Կեղանի Զիպան «պարկեշտ» կերպով պարեր է եղեր այն օրը ուր ինքը ներկայ է գտնուեր . . . » . արդ , այդ աղջիկը պարսկական թատրոնը մտած էր միմիայն պորտի պար պարելու համար . եւ իր ամենէն մեղմ ձեւին մէջ իսկ , այդ պարը պարկեշտ չի կրնար կոչուիլ : Այսպէս նաեւ , Պ. Չերալ կը գրէ թէ Զանչեանի մասին ընդարձակ յօդուած մը հրատարակած չըլլալուն միակ պատճառն իր ոտուներէն չգիտնալն է . . . Զանչեանի հայապաշտպան հըրատարակութեանց ու որբախնամ գործունեութեանը մասին Ֆրանսացի հասարակութեան տեղեկութիւն տալու համար չեմ կարծեր որ ոտուներէն խորունկ հմտութիւն մը անհրաժեշտ ըլլայ . մեր մամուլին մէջ բազմաթիւ յօդուածներ հրատարակուած են այդ նիւթին վրայ , եւ ամենէն դիւրին բանն էր ատոնցմէ քաղելով կենսագրական մը հրատարակել : Վերջապէս , երբ Պ. Չերալ կը ջանայ պաշտպանել իր ընթացքը Քալֆաեանին հանդէպ , մեկնոյն մեթոտին է որ միշտ կը գիւմէ . չի խոստովանիր թէ այդ միմոսը լուրջ գերասանի մը պէս ներկայացուց իր ընթերցողներուն , արուեստագիտական ցերեկոյթի մը երեւոյթը տուաւ «Ժուռնալ»ի սրահին մէջ անոր տուած խեղկատակ Համլէթին , որու վրայ նոյն իսկ «Ժուռնալ»ը խուսափեցաւ նկարագրութեան ըստ մը հրատարակելէ , ու մինչեւ անգամ ծանոյց թէ Քալֆաեան մտադիր էր Լոնտոն մեկնիլ : «Շեքսպիրի հայրենիքին մէջ Համլէթ խաղալու համար» , եւ յետոյ ոչ մէկ տեղեկութիւն չտուաւ իր ընթերցողներուն՝ երբ Քալֆաեան , Լոնտոն երթալով , յորդոր ընդունեցաւ Անգլիացիներէն՝ որ Համլէթ խաղալու տեղ իր մտաւոր վիճակը դարձանելու հոգ տանի : Անշուշտ «Անահիտ» ինթերցողները չեն երեւակայիր որ ամուլ վէճ մը պիտի շարունակեմ այսպիսի սխտեմի մը ետեւ ամբացած անձի մը հետ . բանակերը կ'ատեմ , եւ արդէն շատ կարեւոր ինդիւրներ կան ուսումնասիրուելու , որոնց հազիւ կը բաւէ «Անահիտ»ին ծաւալը : Միայն , վերջին անգամ ըլլալով , պիտի կըրկնեմ դիտողութիւն մը զոր արդէն յայտնած եմ Պ. Չերալին . իր իրաւունքն է պատասխանել իր մասին յայտնուած դատումներուն . բայց իր պատասխանները , այդ ոճով մասնաւանդ , լաւագոյն է որ ոեւ է հայերէն թերթի մը մէջ հրատարակէ , փոխանակ մեր ներ-

քին կոխները օտարներուն առջև փոխ-  
լու իր այգախիսի գրուածները չեն վնասեր  
այն անձերուն որոնց կ'ուզողուին, այլ կը վնաս-  
ան միմիայն թերթին եւ կը վնասեն մեր դա-  
տին պէտք չէ մոռնալ թէ այդ թերթին մէջ որ  
Հայերու համար օտարներու մէջ համակրու-  
թիւններ արթնցնել իրեննպատակ ունի, Պ. Չե-  
րազ բազմաթիւ յօդուածներ հրատարակած է Հն-  
չակեաններն իբրեւ անիշխանականներու եւ  
աւաղակներու ընկերութիւն մը ներկայաց-  
նելու, Ն. Մէնէլիշեանը («պուշ, սոգէա, շուն») ա-  
նուանելու եւ ամբողջ Եւրոպայի յարգանքը  
վայելող Վիեննայի Միթարեանց վանքը իբրեւ  
կեղծարարներու սուն մը ցուցնելու համար  
հիմա իր այդ տխուր աւելնը իմ շուրջս կը  
փրփրայ կոր իր վերջին յօդուածին մէջ  
Պ. Չերազ «Օսքար Ուայլտի փաստարան» կ'ա-  
նուանէ զիս, այսպէս մը ցոյց տալով թէ զժ-  
բաղդ Անգլիացիին «մուլութիւնը» պաշտպանած  
եմ, մինչդեռ «Հայրենիք» ի մէջ հրատարակած  
յօդուածովս, զոր հպարտ եմ գրած ըլլալուս,  
ուրիշ բան չէի ըրած բայց եթէ բողոքել այն  
կեղծաւոր ու բարբարոս վարմունքին դէմ ո-  
րով Անգլիա իր դատաւորներուն ձեռքով  
փշրեց հարուստ ազնուակոսի մը որսին գոնա-  
ցում տալու համար իր ամենէն նուրբ, ամե-  
նէն սիրուն արուեստագէտներէն մին՝ մորու-  
թեան մը համար որ ինծի գարշանք կը պատճա-  
ռէ, բայց զոր ամբողջ Արեւելքը, ամբողջ հին  
Յունաստանը իր Սոկրատովն ու Պղատ նովը,  
սիրած ու փառարանած են եւ որով վարակուած  
է Անգլիոյ բարձր դասը ամենամեծ մասամբ  
(եւ ինձմէ առաջ Ֆրանսացի ամենամեծ գրա-  
դէտներ՝ ամէն կուսակցութենէ՝ ջերմապէս  
բողոքած էին անգլիական դատարանին այդ ըն-  
թացքին դէմ, եւ նոյն իսկ Անգլիոյ թագուհին  
աղերսագիր մը զրկած էին Ուայլտի արձակումը  
խնդրելով) :

Ես իմ գիտողութիւններս ներկայացուցած  
եմ Պ. Չերազին այն միակ նպատակովը որ ուղ-  
ղէ իր մէկ քանի ծանր թիրութիւնները որոնք  
կ'ապականեն իր ազգասիրական գործունէու-  
թեանը օգտակար ամբողջութիւնը : Օգտուելի  
կամ ոչ՝ այսպիսի անկեղծ, անաչառ ու բարի  
քննադատութիւններէ, ես իմ պարտքս կատա-  
րած կ'ըլլամ : Միայն թէ երբ կ'երեւակայէ  
որ Քամառ Քաթիպայի «հայկական նախանձ» էն  
զրդուած այսպէս կը վարուիս, Պ. Չերազ կ'ա-  
պաղուցանէ որ ծիծաղելիին զգացումէն բոլորու-  
վին զրկուած է :

ՄՇԱԿ. — «Մշակ» ի քրոնիկագիրը, իր ա-  
նուղղամտութեանը մէջ յամառ, կը փորձէ  
պաշտպանել խեղաթիւրումը զոր գործած էր  
ԹուրքիէնէՖի մասին իմ մէկ Ֆրազիս նկատ-  
մամբ : Այդ արդարացումը կը կատարէ անկա-  
պակից, հակասական, անմիա առեբու քառսի  
մը մէջ, որ հակառակ իր իմաստակորէն  
ամբարտաւան շեշտին՝ յանցանքի մէջ օ-  
ձիքէն բռնուած բղէղի շուարումը կը մտանէ :

«Անահիտ» ի ուսահայ ընթերցողները կրնան  
բաղդասել երկու կողմէն երեւցած յօդուած-  
ները, եւ դժուարութիւն պիտի չզգան կզրա-  
կացութեան մը հասնելու : Կարեւորը այդ չէ  
սակայն «Մշակ» ի այդ նոր յօդուածին մէջ :  
Ինչ որ այնուհոգ ուշադրութեան ամենէն աւելի  
արժանի է, այն ցած, աղտոտ, դոնհիկ  
եղանակն է որով յօդուածագիրը Մանուէլեա-  
նի, Շահինի, Եուպարի եւ Եերսէսի մասին  
յայտնած դատաստաններս կը ճգնի վերագրել  
չահաղիտական, անձնական նկատումներու :  
Քաղաքաբններու վէճի մը մէջ չարչիի հաշիւ-  
ներ փնտսելը մեր մամուլին ախտերէն մէկն  
է. եւ «Մշակ»ը ամէն ջանք ընելու վրայ է  
ապացուցանելու համար որ այդ ախտով ինքն  
ալ խորապէս վարակուած է : «Անահիտ» ի մէջ  
եւ շատ անձեր քննադատած եմ, բայց միշտ գա-  
ղափարներու տեսակէտէն նկատած եմ զա-  
նոնք, եւ անոնց մէջ շահամուլութիւնը կամ  
անուղղամտութիւնը այն ատեն միայն խնդրոյ  
ստարկայ ըրած եմ երբ փաստերով ըսածս հաս-  
տատելու կաշող զգացած եմ զիս :

«Մշակ» ին դէպի «Անահիտ»ը վերաբերումն  
քը, նախ բարեկերթ ու համակրական, «Ռու-  
սահայեր եւ Թրքահայեր» յօդուածէս յետոյ է  
որ յանկարծ լեղուցաւ. եւ սակայն այդ յօդ-  
ուածիս մէջ ուրիշ բան չէի ըրած բայց եթէ «Մշա-  
կ» ըրոնիկագրին գրական վարդապետութեանց  
ու թրքահայ գրականութիւնը քննադատելու  
եղանակին նկատմամբ մէկ քանի հակասոհ  
դիտողութիւններ ներկայացնել. փոխանակ  
ըջօրէն ինչորոշ խորը մտնելու եւ խորհրդա-  
ծութիւններով, պատճառարանութիւններով  
իւր թէզը պաշտպանելու, «Մշակ» ին քրոնիկա-  
գիրը կրնաւոյի հայտնաբերումը պատասխա-  
նեց ինծի, ու յետոյ գրպարտութեան, իսկ-  
զաթիւրումի զգուելի միջոցներուն դիմեց կար-  
ծելով թէ ատոնցմով կրնար ի ծի վնասել :  
Դիտուող «թիրեք»ը զոր այս ուղղութեան մէջ  
այդ սքողեալ պաշտօնակիցն ինծի դէմ կը գոր-  
ծածէ — ինչպէս եւ ա' յնչափ ուրիշներ՝ կովկա-  
սի եւ արտասահմանի մէջ, — իմ գովեստներս  
ու պարսաւներս շահախնդիր շարժառիթներէ  
բխած ցոյց տալու եւ մասնաւորապէս զիս  
իբրեւ Եերսէսի յիշատակին դէմ դաւող մը ներ-  
կայացնելով անոր անուինն ամբողջ ժողովրդա-  
կանութիւնը ինծի դէմ դարձնելու այնչափ  
տխմար որչափ զաղեր սխտեմն է :

«Մշակ» ին քրոնիկագիրը պէտք է համոզուի  
որ այդ կեղտոտ ու խախտա զէնքերը՝ զա-  
նոնք գործածողին դէմ կը դատնան միշտ : Մա-  
նուէլեանին ու Շահինին տաղանդին համար  
ունեցած հիացումս վարժապետական անամէջ  
տողերով չէր որ արտայայտած էի, զայն «պատ-  
ճառարանած» էի մանրամասն ուսումնասիրու-  
թեամբ մը. փոխանակ տխմար ու վարնոց յա-  
մատութեամբ մը կրկնելու թէ այդ երկու պա-  
րոնները կը գովեմ՝ անոնցմէ շահ մը սպասե-  
լուս համար (ի՞նչ շահ, ո՞վ երկինք... ) եւ թէ

մանաւանդ գիտական ու զեղարուեստական գործերու մասին կարծիք յայտնելով «դատողութիւններ արած կ'ըլլամ այնպիսի բաների մասին որոնց անձամբ տեղեակ չեմ», «Մշակ»ի յօդուածագիրը պէտք է որ գոնէ միակ փաստ մը ցոյց տայ իմ գովեստներուս անհիմ ու կողմնակալ ըլլալը հաստատող, եւ ապացուցանէ թէ ուսումնասիրութիւնս կը պարունակէ գոնէ միակ սխալ մը որ նիւթին անգիտակ ըլլալս կարեւոր էրեւան հանել: Ասանց ատոր, «Մշակ»ի յօդուածագիրն զիտողութիւնը վայհաչան պառաւի տոտուք մըն է եւ ուրիշ ոչինչ (\*):

Ներսէսի մասին իմ յայտնած զաղափարներուս նկատմամբ գրելով սա տողերը՝ «Պ. Չօպանեան Նուպար փաշայի թելադրութեամբ կամեցաւ թաղել Ներսէս Պատրիարքի անունը», «Մշակ»ի յօդուածագիրը անամօթ ստախօսութիւն մը գործած կ'ըլլայ. այն միջոցին ուր Ներսէսի մասին յօդուածս գրեցի, Նուպար Փաշա տարիէ մը ի վեր անբուժելի հիւանդութեամբ մը անկողնին դամուած, արդէն հոգեվարքի օրերուն մէջ էր, եւ ո եւ է թելադրութիւն ընելու անկարող: Պ. Չօպան, որ միեւնոյն կասկածը յանդիման էր յայտնել յօդուածիս երեւումէն քիչ յետոյ, իր խօսքը ետ առաւ՝ երբ «Անահիտ»ի մէջ երկտողով մը այդ զրպարտութեան տխմարութիւնը ապացուցի: Պէտք է ըսեմ արդէն որ Նուպար Փաշա այդպիսի անարգ միջոցի մը զիջանելու մարդ չէր: Եթէ այդպէս ըլլար, Ներսէսի մեռնելէն տասը տարի յետոյ չէր որ անոր դէմ յարձակողական գրուածքներ հրատարակել սալու դաղափարը պիտի ունենար: Այդ յօդուածովս երբեք նպատակ չեմ ունեցած «Ներսէսի անունը թաղելու». Ներսէսի գործունէութեան մէկ մասը քննադատած եմ, եւ միշտ կը պահեմ այդ մտածելու եղանակս, որ արդէն Նուպարի տեսութեանց հետ ամբողջապէս համաձայն ալ չէ եւ որուն ճիշդ կամ սխալ ըլլալը «իրողութիւնները» պիտի վճռեն օր մը: «Մշակ»ին յօդուածագիրը կրնայ Ներսէսի մասին յայտնած կարծիքներուս համախոհ չըլլալ. թող իր հակախոհութեան փաստերը մէջտեղ դնէ, փոխանակ ազտօտ ենթադրութիւններ ընելու:

(\*) «Մշակ»ի քրոնիկագիրն կը յանձնարարեմ կարգալ Ս. Բեթսպուրկի Բժշկական Ակադեմիային բրոֆեսոր Պեթթերեվի վերջին գործը, «ուղեղին ու ողնածուծին հաղորդակցութեան ճամբաները», որուն մէջ ուս մեծանուն գիտնականը Մանուէլեանի աշխատութիւնները կը յիշատակէ եւրոպացի ամենէն նշանաւոր գիտուններուն աշխատութիւններուն հետ: Կը սպասեմ որ «Մշակ»ի քրոնիկագիրը բացատրէ այն շահադիտական պատճառները որոնցմէ Պեթթերեվ մղուած է «Մշակ»ին գնահատմանը արժանանալու չյաջողած հայ գիտնականի մը նկատմամբ այդ փաղաքելի ընթացքը բռնելու համար:

Իսկ չեմ գիտեր թէ ի՞նչ կարելի է մտածել այն մարդակերի ուրախութեան վրայ զոր «Մշակ»ի յօդուածագիրը դուրս կուտայ «Անահիտ»ը մահամերձ կարծելով: «Մշակ»ի խմբագիրները շատ լաւ գիտեն որ ես իրենց պէս ժառանգորդը չեմ Արծրունիի մը գոհողութիւններովը, դժնդակ ճիգերովը ու խրոխտ տաղանդով հիմնուած շէնքի մը, եւ «Անահիտ»ը հիմնած եմ միմիայն իմ անձնական ջանքերուս ապաստանած, նիւթական ողբայի միջոցներով, — որոնց մէջ Նուպար փաշայի երեւակայեալ շնորհքները բնաւ տեղ չունին. ամօթ է որ լրատագրի մը նիւթական միջոցներու պակասը (որով Արծրունի իսկ տառապած է ասեմ մը) թերթի մը հրատարակչին երեսը նետեն իբրեւ մեղադրանք, փոխանակ զրական ձեռնարկներու անտարբեր հարուստներուն անզգայութիւնը եւ բաժանորդագրին չվճարող բաժանորդներու անխղճամտութիւնը ձագկելու: Կը յորդորեմ սակայն «Մշակ»ի միամիտ քրոնիկագիրը որ իր ուրախութիւնը զրպանը դնէ. թող վստահ ըլլայ որ «Անահիտ»ը պիտի ճեղքէ, եւ անոր սաստը մեր մամուլին, ինչպէս եւ մեր հանրային ուրիշ հաստատութեանց, վատութիւններուն եւ չարութիւններուն վերեւ պիտի միշտ թնդայ:

«ԲՐՕ ԱՐՄԵՆԻԱ» ԵՒ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ. — Դրօշակը խանդավառ յօդուածով մը կ'ողջունէ «Բրօ Արմենիա»ի երեւումը: Ասկից 5-6 տարի առաջ, մեր յեղափոխականները, Հնչակեան թէ Դրօշակեան, ոչ մէկ կարեւորութիւն չէին ընծայեր եւրոպական հանրային կարծիքը հայկական հարցին վրայ սաւորելու գործին, նոյն իսկ զայն կ'արհամարհեին: Այսօր, յեղափոխական կուսակցութեան մը օրկանը այդ գործը կը քննհատէ եւ կը խրախուսէ ամենէն անվերապահ համոզմունքով: Ոչ ոք այս բարեփոխութեան այնքան գոհ կրնայ ըլլալ որքան այս տողերը գրողը, որ առաջին օրէն զդացուցած է այդ գործին անհրաժեշտ պէտքը, եւ որուն ջանքերովն է արդէն որ մեր դատին հետաքրքրուելու ֆրանսական թերթերու մէջ մեր խնդրոյն մասին յօդուածներ հրատարակել սկսան կարգ մը հոչակաւոր ֆրանսացի գրագէտներ, որոնց ոմանք «Բրօ Արմենիա»ի խմբագրական քոմիթէն կազմած են: Արդէն բովանդակ հայ մամուլը ուրախութեան եւ երախտագիտութեան արտայայտութիւններով ողջունեց «Բրօ Արմենիա»ի երեւումը, եւ բնական էր որ այդպէս ըլլար: Մեր թերթերուն մէջ այդ մասին հրատարակուած յօդուածներէն՝ միայն «Լ'Արմէնի»ի եւ «Շարժում»ի յօդուածներն են որ պարսակելի կէտեր կը պաշտնակեն: Պ. Չօպան կը շեշտէր թէ «Բրօ Արմենիա»ն օրէյֆիւսեան գրագէտներու օրկան մըն էր՝ Դրօշակեաններէ պաշտպանուած. անշուշտ, զլլաւորապէս տրէյֆիւսեան

գրադէտներ են որ թերթին վարչութիւնը ձեռք առած են եւ Դրօշակեաններն ալ իրօք մեծ համակրութիւն ցոյց կուտան անոր, բայց թերթը միայն Հայոց խնդրոյն նուիրուած անկախ օրկան մըն է, ամէն կուսակցութեան, ամէն ազգի հայասերներու աջակցութեանը հրաւեր կարգացող: Եւ անտեղի, ու նոյն իսկ չարամիտ կը գտնեմ որ Պ. Չերազ այդ թերթը իբրեւ երկու որոշ կուսակցութեանց գործիքը ներկայացուցած ըլլայ, իսկ «Շարժում»ը կը գրէր թէ Դաշնակցութիւնը, նկատելով որ հայկական խնդիրը մինչեւ ցարդ պէտք եղածին պէս չէ ներկայացուած եղեր Եւրոպայի մէջ (1), «Բրօ Արմենիա»ն հիմնը է որպէս զի մեր հարցը իր ըմբռնած եղանակովը ծանօթացնէ Եւրոպացի հասարակութեան. ասի պարզապէս դառել է այդ թերթին վարկին դէմ, որովհետեւ Սուլթանին ու Եւրոպային հասկցնել է ատիկա՝ թէ «Բրօ Արմենիա» յօդուածագիրները Հայ քոմիսիէի մը ուղղակի եւ մշտական ներշնչմանը տակ կը շարժին եւ այդ թերթին Ֆրանսացիներու հայասիրութեան անկախ եւ ինքնարուս մէկ արտայայտութիւնն ըլլալու արժանիքը ջնջել: «Շարժում»ին յօդուածը ոչ միայն անխորհուրդ, այլ եւ անճիշդ էր բնականաբար. «Բրօ Արմենիա»ն գործն է Պ. Բիէս Բիյեարին, որ շատոնց կը ցանկար թերթի մը մէջ կեդրոնացնել իր պայքարը Սուլթանին կառավարութեան դէմ եւ «ր» իր մէկ քանի մեծանուն աշխատակիցներուն հետ՝ միակ վարիչն է այդ թերթին, եւ պէտք չունի ոչ մէկ կուսակցութեան խորհուրդին կամ թելադրութեան: Ուրախ ենք գիտելով որ «Բրօ Արմենիա»ն արդէն սկսաւ արձագանք դնել Եւրոպական մասուլին մէջ. գերմանական, իտալական, անգլիական մէկ քանի մեծ թերթեր «Բրօ Արմենիա»ի յօդուածներէն քաղուածքներ կը հրատարակեն: Միջազգային հռչակ ունեցող անձնաւորութիւններ — Պերնշթամ, — վան Գոլ, պարոն Կ'էսթուանէլ տը Գոնսթան, — նամակներ կը զրկեն «Բրօ Արմենիա»ին իրենց համակրութիւնը յայտնելով հայկական դատին: Պարոն Կ'էսթուանէլ տը Գոնսթանի շատ գեղեցիկ նամակը հետեւեալ տողերով կ'աւարտէր. «Շարունակեցէք ձեր փրփականտը, մասնանիքը բնաւ մարդասպանները՝ ոչ թէ կառավարութիւններուն, այլ բովանդակ մարդկութեան. մարդկութիւնը պիտի չուշանայ յուզուելու, կառավարութիւնները պիտի հնազանդին անոր, եւ ոճրագործները պիտի զոզան ոչ թէ խղճի խայթէ, այլ պատիժին մօտենալուն վախէն... Յոյս զրէք իրերու այդ արդար շրջումին վրայ. բայց, առ այժմ, գիտցէք որ անապատի մէջ քարոզող մը չէք: Ֆրանսայի այժմեան արտաքին գործոց նախարարը, վստահ եմ, իր սիր-

տը գթութեան առջեւ փակող մարդ մը չէ, եւ մենք շատեր ենք՝ Երեսփոխանական Ժողովին ու Ծերակոյտին մէջ՝ որ, առանց կուսակցական խտրութեան, չպիտի վախնանք ձեզի պէս մեր զայրոյթը յայտնելու»: Եւ կարգ մը իրողութիւններ, որոնք թերեւս ի մօտոյ հրատարակուին, Տպիտի հաստատեն որ Պարոն Կ'էսթուանէլ իրաւունք ունի մտածելու թէ Պ. Տէլքասէ «իր սիրտը գթութեան առջեւ փակող մարդ չէ»:

Փափաքելի էր միայն որ «Բրօ Արմենիա»ն չչատանար Հայոց տառապանքերը Եւրոպային ներկայացնելով, այլ եւ ի վեր հանէր Հայ Ժողովրդին պատմական ու քաղաքակրթական նշանակութիւնը: Ինչ որ Բիյեարը ըսած է Պ. Բաշինջաղեանին ուղղած իր սիրուն նամակին մէջ, պէտք էր որ զայն յաճախ կրկնէր եւ ընդլայնէր իր թերթին մէջ: Այս մասին իր ուշադրութիւնը հրաւիրեցի եւ Բիյեարը յայտնեց թէ մտադիր է ընդհուպ «Բրօ Արմենիա»ի մէջ շարք մը յօդուածներ հրատարակել՝ «Ի՞նչ են Հայերը» համատարողով:

Իժեմ. — Հիմա որ Արզուեան բանտէն ելած է եւ անոր ո՛վ ըլլալը հրապարակուած, «Իժեմ»ը, որոնց մասին խօսած էի վերջին յօդուածիս մէջ, իրենց թոյնը չաքարի փոխել սկսած են: «Շահապ» կեղծանունով ստորագրող քարբիկ մը կը յայտարարէ «Շարժում»ին մէջ թէ «Իրենք ալ (Դաշնակցականները) կը ճանչնան Արզուեանը», թէ «անկեղծ ու եռանդուն հայրենասէր մը եղած է» ան, թէ ես իրաւունք չունիմ եղեր «Արզուեանը «Շարժում»էն եւ «Հայրենիք»էն հալածուած ներկայացնել», թէ «Շարժում»ի Պոլսոյ թղթակից «Բաժ»ը միշտ «համակրանքով ու տեսակ մը գուրգուրանքով խօսած է եղեր այդ անձին վրայ»:

Այս տողերը գրել համարձակողը իր ընթերցողները բացարձակ ապուշներու տեղ դրած ըլլալու է: «Բաժ»ի եւ «Չելօ»ի Արզուեանի մասին գրածը բառ առ բառ յիշած էի վերջին յօդուածիս մէջ. ամէն ոք կրնայ բաղդատել բնագիրներն ու «Շահապ»ի կեղծաւոր, ստայոգ մեկնութիւնը: Անշուշտ «Բաժ»ի ու «Չելօ»ի զրպարաութիւնները որոշ, աներկզմի, արի ձեւով մը չէին արտայայտուած, — իժեմը միշտ պահուրտելով, սողալով կը խայթին, — բայց ամենայնապէս լեւիշն իսկ անոնց խորը թաքցած զիտաւորութիւնը ըմբռնելու համար ո եւ է դժուարութիւն չպիտի քաշէ: «Բաժ» Արզուեանը կ'անուանէ «խեղճ երիտասարդ», զայն ձերբակալող սատիկանները «խրմպըլ» կը կոչէ եւ հեղնաբար կը յիշէ թէ քոմիսերութիւն են ստացեր՝ այդչափ չընչին գոթի մը կատարած ըլլալով հանդերձ,

եւ վերջապէս կը սահեցնէ թէ «Արդուեան յայտարարած է որ Պիւլպիւլեան լրտեսը եւ կարգ մը թրքասէրներ կը ճանչնայ» . սակից ուրիշ բան չէ ըսած «Բաժ» Արդուեանին համար . «Եւր է ասոնց մէջ «համակրանքը» եւ «գուրգուրանքը» . եւ ի՞նչ աստիճան տխմար լրտութիւն մը ունենալու է մարդ ասոնց մէջ պահուըտած չարամտութիւնը ուրանալ յամառելու համար :

ՇԱԽԻՂ . — «Կը զարմանանք , կը գրէ Պ. Երուանդ Սրմաքեչխանլեան «Շաւիղ»ի մէջ , որ Պ. Չօպանեան ո եւ է համարում ունեցած ըլլայ Ահմէտ Րիզայի վրայ : »Նոյն թերթին մէջ , Պ. Սրմաքեչխանլեան , դարձեալ խօսելով Երիտասարդ-Թուրքերու մասին , հետեւեալ վճիռը կ'արձակէ՝ «Բոլոր Ահմէտ Րիզաները , Հալիլ Կանեմները , Մահմուտ փաշաները մերկացուր իրենց ծպտումէն ու եթէ չես քաշուիր՝ սոփա մըն ալ տուր ձեռուընին ու պիտի տեսնես որ նախանձելի մրցակիցներ պիտի հանդիսանան Պոլսոյ փողոցներուն երբեմնի արիւնկզակ շահատակներուն» : Պ. Սրմաքեչխանլեան այս պիտի յսխուռն դատաստան մը պիտի չյայտնէր Րիզայի անձնաւորութեան մասին , անոր վրայ համարում ունեցած ըլլալս երբեք պիտի չզարմացնէր զինքը եւ մանաւանդ երբեք պիտի անոր չվերագրէր սոփածի ընդունակութիւններ , եթէ ուսումնասիրած ըլլար «Մէշվէրէթ»ի տնօրէնին ամբողջ անցեալը :

Ահմէտ Րիզա պէյ , որդի ազատական Թուրքի մը , «ինկիլիլիզ» Ահմէտ փաշային եւ աւստրիացի կնոջ մը , զուտ եւրոպական զաստիարակութիւն ստացած է : Իր նկարագրի անկախութեան եւ զազափարներու յառաջդիմականութեան ապացոյցը տուաւ , հայկական ջարդերէն շատ առաջ ձգելով Պոլիսն ուր պաշտօն ունէր եւ ուր կրնար մեծ աստիճաններու հասնիլ՝ եթէ ուզէր ուրիշներուն պէս համակերպիլ տիրող ռեժիմին գարշելի պայմաններուն . եկաւ Բարիզ , ուր սկսաւ պայքար մը Համիտի վարչութեան դէմ եւ փորձեց վերսկզբի ազատական շարժումը Տաճիկներուն մէջ յանձն առաւ՝ ատոր համար՝ աղքատ ուսանողի տաժանելի կեանք մը , ասեմն մը եւրոպական ընկերութեանց մէջ թարգմանի պաշտօն կատարեց , յետոյ ուրիշ մանր մունր գործերով իր ապրուստը հանեց : Ո եւ է շանթած գոյութիւն չունէր իր պայքարին մէջ , զոր իր ազատ կամքովը ձեռնարկած էր . Սուլթանը նախ ուզեց զինքը վարձել . Րիզա պատասխանեց արհամարհոտ մերժումով մը . այն ատեն Համիտ իր եւրոպական միջավայրներու մէջ ունեցած աղղեցութեամբը Րիզան հանել տուաւ

իր գաած պաշտօններէն . Րիզա յանձն առաւ այդ անապահով ու դժնդակ կեանքը որ իրեն առջեւ կը բացուէր , եւ անվկանդ մնաց իր կոտի մէջ : Համակերպ ֆրանսացի ազատասիրտ կուսակցութեան ու հետեւող դրապաշտ վարդապետութեան , Րիզա բարեկամութիւնը շահեցաւ ֆրանսացի նշանաւոր ազատական անձնաւորութիւններու , եւ Բարիզ հասնելուս՝ Քլեմանտոյի , Բիէռ Լաֆիթի , Վիքթոր Պետառի պէս անձերէ իր անունը գովեստներով յիշատակուած իմացայ : Զարդերու միջոցին , ու անկից ի վեր , իր պայքարը Սուլթանին դէմ արիւն անընդհատական ու բոլորովին աներկդիմի եղաւ , եւ իրեն քաշեց Ֆրանսայի ու Անգլիոյ շատ մը ազատական անձնաւորութեանց համակրութիւնները , որոնք ա՛յնքան շքեղօրէն յայտնուեցան Սուլթանին «Մէշվէրէթ»ին դէմ բացած դատին մէջ որ Րիզայի փառաւորումն ու Սուլթանին դատապարտութիւնը եղաւ : Իր յարասեւութիւնը , զոնորութեան ու գին , անխախտ հաւատարմութիւնը իր ընդգրկած դատին , զինքը տեսակ մը դրօշակ դարձուցին բոլոր ազատական Թուրքերուն , կեղծ կամ տնկեղծ , որոնք իրմէ խրախուսուած , իր շուրջը հաւաքուեցան , կամ իր օրինակին հետեւելով՝ ուրիշ խմբաւորներ կազմեցին , որոնցմէ ոմանք իր ծրագրէն աւելի անդին անցան : Այսպիսի անձի մը համար , որուն պէս իրաւ է թէ , ինչպէս Մահմուտ փաշա զրեց անոր ուղղած բաց նամակին մէջ , երկու հատ չունի այսօր թուրք ազգը , ուրիշ զգացում կարելի չէր ունենալ բայց եթէ յարգանք : Իր կեանքին այս մաքուր նկարագրին մասին յարգանքս միշտ անփոփոխ մնացած է : Իր գործունէութեան վերջերս զգեցած ձեւին համար է որ զգացումներս փոխուած են . երբեք իրեն համակարծիք չեմ եղած իր քաղաքական ծրագրին մէջ : «Անահիտ»ի Բ. տարուան թիւ 1-2ի մէջ կը գրէի արդէն հետեւեալը . «Իրեն (Րիզային) առջի օրէն բաց է բաց ըսած էի Հայու մը իբր Երիտասարդ Թուրք գործելու անկարելութիւնը , երբեք չընդունեցայ աշխատակցիլ իր «Մէշվէրէթ»ին , հակառակ իր բազմապատկուած առաջարկներուն , եւն » Րիզա , ընդհանուր դատարարակութեամբ ազատասիրտ , քաղաքական ուղղութեանը մէջ մոլեռանդ «Թուրք ազգայնական» մըն է , եւ սկիզբէն մինչեւ այսօր միեւնոյն ուղղութիւնը ջատագոված է : Իր ազատամտութիւնը երբեք չէ հասած Կլատսթոնի մը ազատամտութեանը որ իրլանտայի ինքնավարութիւնը կը պահանջէր . Րիզա միշտ յայտարարած է թէ Տաճկաստանի ամբողջութեան կազմուածքը պէտք է պահէ իր statu quoն , թէ անոր ոչ մէկ մասը առանձին վարչութիւն մը պէտք չէ որ ունե-

նայ, եւ թէ ամբողջ Տաճկաստանը իր բոլոր մասերուն մէջ հաւասարապէս պէտք է որ բարենորոգութիւն իր այս վարդապետութիւնը կը չհնուր, ըստ իս, սխալ հիմերու վրայ, եւ միշտ զայդ յայտնած եմ իրեն. բայց Րիզա համազուն էր այդ ծրագրին գործնականութեանը եւ արդարութեանը. թուրք հայրենասէր մըն էր ինքը, որ կ'ուզէր որ Տաճկաստանը, իր բոլոր ցեղերովը, միակ ազգի մը, «օսմանեան ազգին» մէջ միացած, եւրոպական սկզբունքներու վրայ հիմնուած քաղաքակիրթ կառավարութիւն մը ունենար: Այդ վարդապետութիւնը կրնայ շատերուն անգործնական թուիլ ու մասնաւորապէս մեզի՝ Հայերուս՝ անսխորժ ու վնասակար. սակայն չենք կրնար պարսաւել թուրք հայրենասէր մը՝ այդպէս մտածելուն, եւ չենք կրնար սպասել որ հայ հայրենասէրի մը պէս զգայ ու գործէ ան: Իրեն հետ միշտ պահած եմ ամենաքաղաքավար ու ամենայարգալից յարաբերութիւններ, միշտ իր գաղափարներուն արամագծօրէն հակառակ գաղափարներ յայտնելով հանդերձ՝ իրեն հետ ունեցած տեսակցութեանցս ինչպէս եւ հրապարակային գործունէութեանս մէջ:

Որչափ ատեն որ Րիզա իր դատը պաշտպանելով կը շատանար, ոչինչ չէի գտներ իր մէջ դատապարտելի. եւ կը բաւականանայի ես ալ մեր դատը պաշտպանելով մեր ճամբուն մէջ, որ տարբեր էր անոր ճամբէն: Վերջերս, Րիզայի թլքական ազգայնամոլութիւնը սաստկացաւ եւ «Մէշվէրեթ» ի տընօրէնը սկսաւ թուրքիոյ քրիստոնեայ ազգայնութիւններուն ինքնավարութեան բաղձանքին դէմ ուղղակի պայքարիլ՝ այդ բաղձանքին գործնականութիւնն ու արդարութիւնը ուրանալով. այս վարմունքը թերեւս արամաբանական եղբակացութիւնն էր իր յայտադրին: Բայց ատոր մէջ անիրաւ, տգեղ ու մինչեւ իսկ անազնիւ բան մը կար, զոր կարելի չէր չնկատել. իր դատը յաջողցնելու համար, Րիզա սկսաւ դիմել Պոլսոյ թուրք զիւանադիտութեան անուղղամիտ միջոցներուն, իրողութիւնները խեղաթիւրելու, անձիշդ կերպով իրերուն կացութիւնը ներկայացնելու, Հայոց մասին սխալ տեղեկութիւններ տալու Ներսիսյանց, եւն: Խաղաղութեան Համաժողովին մէջ իր բնութագրը դաւ մըն էր մեր դատին դէմ: Եթէ այն միջոցին ուր մեր հարցը մէջտեղ գրուեցաւ, լուռ մնացած ըլլար, եւ մեր հարցէն յետոյ կամ առաջ, անջատօրէն թրքական խնդրոյն մասին իր դիմումը կատարած ըլլար Համաժողովին՝ ոեւ է առարկութիւն պիտի չունենայի ընելու, որչափ ալ իր դիմումը մեր դիմումին հակառակ ուղղութիւն ունենար. ինք իր թուրքի պարտքը կատարած պիտի ըլ-

լար, ինչպէս մենք՝ մեր Հայու պարտքը. բայց Րիզա մեր հարցին մեր ուզած ձեւովը լուծուելու որոշումը տրուելուն դեմ ուղղակի յարձակեցաւ, եւ յաջողեցաւ մտքերը պղտորել: Այդ բնութագրը դատապարտելի էր. եւ ես առաջինը եղայ այդ մասին իմ տպաւորութիւնս յայտնող: Բայց ատկից Պ. Սրմէքէշխանլեան պէտք չէ հետեւցնէ թէ Րիզան պէտք էր միշտ նկատած ըլլալ իբր եւ յարգանքի անարժան անձ մը եւ թէ հիմա այլեւս կարելի է դայն շնորհիւ Պոլսոյ սոփաճիներուն հետ: Այդպիսի դատաստան մը եթէ թարգմանուէր եւրոպական ոեւ է լեզուով մը, աննպաստ կարծիք մը պիտի գոյացնել տար Ներսիսյանցինուն՝ մեր դատելու եղանակին վրայ: Պէտք է որ մենք անողոք ըլլանք մեր պայքարին մէջ՝ մեր հակառակորդներուն գաղափարին ու գործունէութեանը դէմ, բայց պէտք չէ որ անարդար ըլլանք մեր հակառակորդներուն անձին նկատմամբ:

Ա. ՉՊԱՆԵԱՆ

Յ. Գ. — Ձեռքս անցաւ բանփլէ մը, «Խարզան» տիպոգրով, որուն մէջ Պ. Սուրէն Պարթևեան հետաքրքրաշարժ փորձը կատարել է իմ դէմքս իր խաթուրք քոնսիւրֆի հօգիին մէջէն ցոյց տալու: Յաջորդ քրոնիկիս մէջ պիտի քննեմ ախտաբանական երևուածքը զոր այդ գրքոյկն է յայտ կը բերէ:

Ս. Զ.



ՕՍՄԱՆ ՓԱՅԱ

Բ Ա Ղ Դ Ա Խ Ն Դ Ի Ը Ը

Բարիքի մեծագոյն լրագիրներէն մին, «Մաթէն»ը, վերջերս մեծածխոր յօդուածներու շարք մը սկսած էր հրատարակել Օսման փաշա անուն անձի մը նկատմամբ որ ինքզինքը կը ներկայացնէր իբրեւ Սուլթանին դէմ պայքարի մտնելու պատրաստ խիզախ հայրենասէր մը: Օսման, ցեղով Գիւրտ եւ որդի նշանաւոր Պետրիսան փաշային, կը յայտարարէր թէ զղուած է Սուլթանին քոնսպետական ուժիմէն, թէ որոշած է իր բոլոր ուժերը նուիրել այդ ուժիմը տապալելու, թէ իր նպատակն է Հայաստանն ու Բիւրտիստանն ազատել թրքական լուծէն, թէ արդէն Հայերն ու Բիւրտիստերը համաձայնած ու միացած են եւ Տի-

արպէքերի, էրդրումի, Վանի, Պիթլիսի մէջ 100,000 ի չափ հոգի իրեն կը սպասեն՝ ոտքի ելլելու համար, թէ մեծ քանակութեամբ զէնք, փամփուռացի եւ ուժանակ պահուած կայ այդ տեղուանքը, եւ թէ որոշած է ի մօտոյ մեկնել Սնատուլու՝ ապստամբութեան դրօշը պարզելու համար:

Քիւրտերու եւ Հայերու ապագայ յարաբերութեանց մասին իմ տենչանքներս ծանօթ են «Անահիտ» ընթերցողներուն: Բայց այս անկարծ երեւան ելլող հերոսը, իր բոլոր ծրագիրը առաջուց Սուլթանին իմացնելու եւ Թրքահայաստանի մէջ քաղաքներ յակնէ յանուանէ նշանակելու եղեռնականօրէն անխոհեմ մեթոտ վը, ինծի վրդովիչ ու քիչ մը չէլերեւցաւ: Եթէ այդ անձը անսպարկեշտ բաղդախնդիր մը չէր եւ իր զգացումներն ու գործելու փափաքը լուրջ էին, իր այդ գործունէութեան եղանակը, ծայրայեղօրէն անխորհուրդ ու թեթեւ, մեծապէս վտանգաւոր էր Հայոց համար, եւ պէտք էր վտանգին առաջն առնել. եթէ պարզ բաղդախնդիր մըն էր՝ կարգ մը Երիտասարդ Թուրքերու պէս, անհրաժեշտ էր անյապաղ դիմակազերծ ընել զայն: Նամակով մը դիմեցի «Քիւրտիսթան» թերթին սնօրէն Ապտիւրրահման պէյ Պէաբրխանին, որուն հայասիրական ձրգտումներուն մասին տեղեկութիւն արուած է «Անահիտ» ի մէջ, եւ բացատրութիւն ուղեցի այդ Օսման փաշային ընթացքին վրայ: Ապտիւրրահման անձամբ եկաւ ինծի յայտարարել թէ Օսմանը իր հղբայրն էր, բայց անբարոյական անձ մը, զոր իր ընտանիքը վտարած էր, եւ որ երկայն ատեն Սուլթանին գործիքներէն մին եղած, յետոյ երեսէ ինկած ու երկրէն հեռացած, հիմա կ'ուզէր այս սուտուփուտ պատմութիւնները հրատարակելով Սուլթանը անաբեկել եւ նորէն անոր արքունիքը մտնել կամ խոշոր գումար մը փրցնել անկից: Սայտառակ շանթաժի փորձ մըն էր ուրեմն պարզապէս, շանթաժ մը որ Հայոց համար ամենէն աղետաբեր արդիւնքները կրնար ունենալ:

Խնդրեցի Ապտիւրրահման պէյէն որ արտօնէ զիս իր յայտարարութիւնները հրապարակել. յօժարակամ տուաւ իր արտօնութիւնը, եւ Բիէն Քիլիսառ բարեկամս՝ իմ խնդրանքովս՝ «Օսոն» ի 1171 թուոյն մէջ հետեւեալ յօդուածը հրատարակեց.

«Վերջերս «Մաթէն»ը չահեկան «էնթէրվի» մը հրատարակեց իր ընտոնեան թղթակցին

եւ Ապտիւլ-Համիտի նախկին թիկնապահ Օսման փաշայի միջեւ, որ կ'ըսէր թէ պատրաստ էր Քիւրտիստանն ու Հայաստանը ոտքի հանել, թէ հոն հարիւր հազար հոգի, զինուած, իր գալուստին կը սպասէին՝ ապստամբելու համար: Անխոհեմ կամ չափազանց ճարպիկ յայտարարութիւններ, որոնք ամենամեծ հետեւանքներ կրնային ունենալ:

«Քանի մը բարեկարգակ Հայեր, գլխաւորապէս Պ. Արշակ Չօպանեան, վրդովեցան այս հրատարակութենէն. յարաբերութեան մտան Օսման փաշայի եղբորը, Ապտիւրրահման Պէաբրխանին հետ, որ համիտեան բռնապետութեան զէմ պայքարող երկու լրագիր կը վարէ: «Քիւրտիսթան» եւ «Օսմանլը»: Ապտիւրրահման, ամենակորովի պնդումով մը, շատ ծանր յայտնութիւններ ըրած է իրենց, զորոնք յետոյ ինծի ալ կրկնեց: Պէաբ է վերջ զնել վտանգաւոր կատակերգութեան մը որ կրնայ արիւնոտ տոամի մը ձեւով աւարտիլ:

«Օսման փաշա, այժմ յիսուն տարեկանէն քիչ մը աւելի, տասնեւինը որդիներէն մին է նշանաւոր քիւրտ Պէաբրխան պէյին, որ 1889ին զէնքերը վար զրաւ եւ Արշիպեղագոսի կըզգիներէն մէկուն մէջ փակուեցաւ. Պէաբրխանին, որ հերոս մը եղած էր, անունը շատ ժողովրդական դարձած է Քիւրտերուն մէջ, եւ իր որդիները կարող են այնտեղ օր մը աշխարհական ու կրօնական պետեր դառնալ: Ասոր համար, զանոնք իրենց ծննդավայրէն հեռու կը պահեն եւ կարելի եղածին չափ Սնատուլէն դուրս գտնուող տեղերու մէջ քաղաքային կամ զինուորական պաշտօններ կը յանձնեն անոնց: մինչեւ աստիճան մը կառկածելի կը նկատուին, ինչպէս ամէն ինչ որ ուժ մը կը ներկայացնէ Տաճկաստանի մէջ:

«Միայն Օսման փաշա Ապտիւլ-Համիտի աչքը կրցած էր մտնել. գործիքներէն մէկն էր Ապտիւլ-Հուտա շեխին, որուն ազդեցութիւնը Երլազի մէջ գերակշիռ է: Այդ հրաշագործը, թուրքի կլլող ու երազներ մեկնող, Մարգասպանին զոգահար հոգիին տիրապետած է եւ ամենէն մութ ոճիքները գործելու կը մղէ զայն. շրջապատուած է աւազակներու, զորերու եւ մարգասպաններու ամբողջ վոնակով մը, եւ հանրային կամ անհատական ամէն շարագործութեանց մէջ իր մատը կայ:

«Տեսնելով որ իրենց ընտանիքին պատիւը կը վտանգուէր Օսման փաշայի այս անձին հետ ունեցած զգուշի մտերմութեամբը, իր եղբայր-

ները զանի ուրացած ու վտարած են տասնուհինգ տարիէ ի վեր, եւ Ապտիւրրահման Պէտըրխան զժնդակ պարտականութիւն մը կատարելու համոզումով է որ այս իրողութիւնները կ'ուզէ հրապարակել :

«Բարձր պաշտօն ու գրամ ձեռք ձգելու անյադ տենչանքով, Օսման փաշա Սուլթանին ուշադրութիւնը իր վրայ հրաւիրել ուզած էր նախ ուրիշ սիրազարծութեամբ մը, զոր Ապուլ-Հուսայի նետ համաձայնութեամբ սարքած էին . աջահամբոյրի արարողութեան մը միջոցին, Համիտի ներկայութեանը ուղիովէրով սպանաց իր եղբայրներէն մէկուն, գնդապետ Ալի պէյին : Համիտ, այդ օրը զէշ տրամադրուած, Մանսուրը աքսորեց զինքը, ուրկից Եւրոպա է եկեր :

«Անատուլի մէջ յեղափոխութիւն մը յարուցանելու դիտաւորութիւնը մեծաշնորհ կերպով յայտարարելով, ուրիշ բան չի յուսար բայց եթէ իր Պոլիս վերամուտին արտօնութիւնը աւելի մեծ գնով մը ստանալ եւ իր պաշտպանին նետ կայսերական աւելի բարձր շնորհներ վայելել : Միեւնոյն ասան կարմիր Գազանին պատուական պատրուակ մը կ'ընծայէ խստութիւնները բազմապատկելու համար . յեղափոխականներ փնտռելը ամենէն յաճախ գործածուած շարժառիթն է Հայերը ջարդելու համար . անշուշտ պիտի փութան ենթադրեալ խռովարարին անհամար մեղսակիցներ գտնելու, եւ վարկաբեկ եղած բազմախնդրի մը պողտութիւնը Ապտիւլ-Համիտին ձեռքը զէնք պիտի դառնան նոր կոտորածներ ընել տալու համար :

«Այս պատճառով է որ, ոչ առանց տխրութեան, Ապտիւրրահման Պէտըրխան խնդրեց ինձմէ որ ճշմարտութիւնը դուրս հանեմ եւ արդիւն՝ որչափ որ կարելի է՝ որ մեր հայ բարեկամները չխաբուին Օսման փաշայի օղակին խստամտներէն :

«Ինքն իսկ Ապտիւրրահման՝ քաղաքական վտարանդի մըն է եւ զեռ քիչ ատեն առաջ ի բացակայութեան դատապարտուեցաւ մշտնջենական բերդարդելութեան : Քիւրտերուն համար լաւագոյն ապագայ մը կ'երազէ . սրահն արիւն կ'երթայ երբ կը մտածէ թէ, սխտեմականօրէն տգիտութեան ու բարբարոսութեան մէջ պահուած, Քիւրտերը Համիտի ոխերուն գործիքներն ըլլալ յանձն առին : Լեզուով ու ցեղով անոնք շատ աւելի մօտ են Հայերուն քան Փոքր-Ասիոյ ուրիշ բոլոր ժողովուրդները :

«Մէկ քանի տեղուանք, նոյն իսկ շատ բարեկամաբար կ'ապրին իրարու հետ, եւ կարելի է մտքով տեսնել ապագայ համաձայնութիւն մը միեւնոյն բռնապետութեան այդ երկու զոհերուն միջեւ : Գէթ այս է բուն փառքը Ապտիւրրահման Պէտըրխանին, որ իր ընտանեկան անուշովը բարոյական մեծ ազդեցութիւն ունի իր հայրենակիցներուն վրայ . ահա ինչ կ'ըսէր անոնց՝ վերջերս .

«Ո՛վ Քիւրտեր որ միշտ հռչակաւոր էք եղած ձեր քաջարտութեամբ, խեղճ անվնաս Հայերը ջարդելու ելեր էք հիմա, մինչդեռ ընդհակառակն անոնց օյնութեան հասնելու էիք եւ զանոնք ձեր պաշտպանութեան տակ առնելու էիք : Խնչպէս պիտի սրբէք այդ արատը որով ձեզ ազատեցիք՝ այդ խեղճ մարդիկը սպաննելով եւ Ապտիւլ-Համիտի պաշտօնեաներուն մեղսակից հանդիսանալով : Ա՛յդ է ձեր քաջութիւնը, ձեր պատուոյ եւ վեհանձնութեան համբաւը » :

«Կամուտը աքսորեալին ձայնը պիտի հասնի՞ արդեօք մինչեւ հեռու որ վրանները վաշկատուններուն եւ լսելի պիտի ըլլա՞յ իրենց : Գեղեցիկ բան մըն է իրեն համար այս բողոքն իր ցեղին անունով արձակելը . այս Քիւրտը շատ աւելի քաղաքակիրթ կ'երեւայ քան թէ եւրոպական գիւանազէտները, նախարարներն ու վեհապետները որ ջարդերը ծափահարութիւններով կ'ողջունեն ու Մարդասպանէն չըքանչաններ կ'ընդունին» :

Այս յօդուածին յաջորդ օրը, «Թան»ը հրատարակեց շատ կորովի առաջնորդող մը, որ Հայաստանի արդի կացութեան հրէշայնութիւնը կը պարզէ ու կը զգայնէ թէ Եւրոպան պարտաւոր է անյապաղ ձեռք առնել հայկական խնդիրն ու զայն լուծել, եւ որուն մէջ հետեւեալ հատուածը կար Օսման փաշայի մասին .

«Միամիտ ու նոյն իսկ վտանգաւոր բան մը պիտի ըլլար հաւատք ընծայել այն սպանալիքներուն կամ նոյն իսկ ամբաստանութիւններուն դոր կ'արձակեն կարգ մը նոր տեսակի վրէժխնդիրներ՝ ինչպէս սա Օսման փաշան, որուն նկատմամբ իր եղբայրն իսկ՝ Ապտիւրրահման պէյը զգուշաւոր ըլլալ կը յորդորէ Հայաստանի բարեկամները» :

Այս ջախջախիչ հրատարակութիւններուն Օսման ո եւ է պատտախան չտուաւ : «Մաթէն»ը անկից ի վեր Օսմանի անունն անգամ չյիշեց իր սիւնակներուն մէջ, ուր առաջ ամբողջ շաբաթ մը այդ անունը ամենէն զիւցազներգաւ

կան անականներով պատկուած շողշողաց: «Օո-  
ո»ի եւ «Թան»ի յօդուածներէն մէկ մէկ օրինակ  
ըրկուեցաւ՝ Եւրոպացիներու ձեռքով՝ Սուլթա-  
նին, որպէս զի գիտնայ թէ Եւրոպան իմացած  
է Օսմանի ծրագրին խաբերայական արարք մը  
ըլլալը, եւ թէ պիտի թոյլ չտայ որ զայն իրեն  
պատրուակ բռնէ նոր ջարդեր կամ հալածանք-  
ներ սարքելու համար:

Տարօրինակն այն է որ այսպիսի ծանրա-  
կշիռ դէպքի մը առջեւ, մեր յեղափոխական  
մարմինները բացարձակ անշարժութիւն պա-  
հեցին: Ոչ Հնչակեանները ոչ Դրօշակեանները  
ո եւ է ջանք չփորձեցին այս խնդրէն յառաջ  
դալիք վտանգը չէզոքացնելու համար, մինչ-  
դեռ իրենք աւելի քան ո եւ է մէկը ի վի-  
ճակի էին գիտնալու թէ Օսման կը ստէր հայ  
յեղափոխականներուն եւ իր միջեւ համաձայ-  
նութիւն մը հռչակելով, եւ հետեւաբար իրենք,  
աւելի քան ո եւ է մէկը, պարտաւոր էին  
«Մաթէն»ին եւ Ֆրանսական ուրիշ լրագիրնե-  
րուն պաշտօնական հերքում մը ուղղել այդ  
խաբերայական յայտարարութիւնները քանդե-  
լու համար: Իրենց անհոգութիւնը՝ այս պարա-  
գային մէջ՝ աններելի է: Իսկ Պ. Չերազ Օսմանի  
ծրագիրը իր թերթին մէջ իբրեւ լուրջ լուր  
մը յիշեր էր համակրական տողերով...

Ա. Չ.



ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐՅՆ  
ԵՒ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԴԵՐԸ

—o—

Տընիս Բոչէն, Ֆրանսացի մեծանուն հայա-  
սէր պահպանողական երեսփոխանը, Սորբըր-  
դարանին գեկտ. 23ի նիստին արտասանած կա-  
րեւոր ատենաբանութեանը մէջ, խօսելով այն  
դերին վրայ զոր Եւրոպա ունի կատարելու՝ իր  
քաղաքակրթութիւնը տարածելու համար աշ-  
խարհիս միւս մասերուն մէջ, ուր ընկերական  
կեանքը դեռ անգործ, նախնական կամ բարբարոս  
է մնացած, հետեւեալ կապակցութիւնն ի վեր  
հանց Չինաստանի հարցին ու Հայաստանի  
ջարդերուն միջեւ:

«... Երբ աչքերս կը դարձնեմ Արեւելք,  
հեռաւորագոյն կամ մերձաւորագոյն Արեւելք-

քը, եւ երբ կը տեսնեմ դէպքերը որոնք Չի-  
նաստանի մէջ կ'անցնին, կը հարցնեմ ինքն-  
իրենս թէ այն վայրենիները որոնց հետ գործ  
ունեցանք, որոնք Բեքինը կոխեցին եւ ամիս  
մը ամբողջ համարձակեցան պաշարել մեր  
դեսպանատունները, կը հարցնեմ թէ Թու-  
անները, Չենկերը եւ ուրիշ այդպիսիները,  
երբ բարբարոս խուժանը կը մղէին մեր դես-  
պանատունները պաշարելու, իրենց բար-  
բարոս ու պարզ մտքին մէջ սապէս չէին  
խորհիր. — Բայց վերջապէս Եւրոպան պառակ-  
տուած է. որովհետեւ իր մէջը, իր դրան առջեւ  
չատ ուրիշ դէպքեր պատահեցան. Եւրոպան  
հանդուրժեց որ վեհապետ մը, որուն մայրա-  
քաղաքը Եւրոպային մէջ կը գտնուի, իր հպա-  
տակներէն ահագին մաս մը ջարդէր եւ նոյն  
իսկ Եւրոպայի ներկայացուցիչներուն սպառ-  
նար: Ու յետոյ այդ վեհապետը իր արքու-  
նիքին մէջ հիւր ընդունեցաւ Եւրոպայի ամե-  
նէն հզօր վեհապետները որ քաղաքական պատ-  
ճառներով անոր հետ բարեկամի պէս վա-  
րուեցան:

Այնպէս որ այժմ Եւրոպան կը մտաբերէ այս-  
յանցանքները զոր գործեց եսական քաղաքա-  
կանութեան մը հետեւելով: Եւ երբ յետոյ  
կ'ուզէ աշխարհիս մէջ տարածուիլ եւ անոր  
քաղաքակրթական տիրապետութիւնը ձեռք  
ձգել, իր գործած յանցանքներն իրեն դէմ կ'ել-  
լեն ու իրեն նեղութիւն կը պատճառեն: Այդ  
տիրապետութեան անհրաժեշտ պայմանը նախ  
համաձայնութիւնը պիտի ըլլայ Եւրոպական  
ազգերու միջեւ եւ յետոյ՝ այն սկզբունքը թէ  
պէտք է բարիք ընենք այն ազգերուն ու-  
րոնց կ'ուղենք տիրապետել: Արդ, կը կըրկ-  
նեմ, Եւրոպական ազգերու միջեւ համաձայ-  
նութիւնը անհնարին է եթէ չարունակուի այն  
քաղաքականութիւնը որ կը կայանայ մար-  
դու խորհուրդ չհարցնելով առաջ նետուելու  
եւ յետոյ նայելու մէջ թէ միւսները կը հետե-  
ւին: Այդ համաձայնութիւնը դարձեալ անհնար  
պիտի ըլլայ եթէ միշտ մեր աչքին առջեւ  
չունենանք մարդկային մեծ մտածում մը եւ  
տենչանք մը բարելաւելու կացութիւնը անոնց  
որ քաղաքակրթուած չեն:»



# ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

## ՔԻՒՐՏԸ

Շար .



Այսպէս Բաֆֆրի «Խենթ»ին մէջ , Ասլանը եւ Մուրատը խօսելով Խան Մահմուտի եղբորորդի ծերունի Օմար աղայի հետ որ վաշիկնեւրու ցեղէն ըլլալ կը յայտնէ, Մուրատը կը հարցընէ քիւրտին :

— «Դու գիտե՞ս, քրի՛ վա, որ քո նախնիքը Հայեր են եղել :

— Ես այդ չգիտեմ, պատասխանեց քուրդը վիրաւորուած եղանակով, ես այնքանը միայն գիտեմ որ իմ նախնիքը այդ բերդի տէրերն էին :

— Հէնչ այդ բերդի տէրերը հայեր էին :

Քուրդը դարձեալ չհամոզուեցաւ եւ ցոյց տուեց մեղանից հեռու մի քանի փառաւոր մահաբաձաններ , որ ծածկուած էին մատոածեւ զըմբէթների ներքոյ եւ աւելացրեց :

— Դրանք իմ նախնեաց շիրիմներն են :

— Այդ շիրիմներից շատ առաջ էին քո հայ նախնիքը , առաց Մուրատը, պնդելով իր խօսքը . նրանք կոչվում էին Ռչտունիք եւ այդ երկիրը կոչվում էր Ռչտունեաց աշխարհ : Այդ Ռչտունեաց նախարարներից առաջ եկաւ Վընըրչիկների քրդական ցեղը , ինչպէս մեր Մամգաննան նախարարներից առաջ եկաւ քրդի Մամըկան ցեղը : Եւ ուրիշ շատ քրդական ցեղեր որոնք կան, հայոց ծագումից են :

— Կարելի է պատասխանեց քուրդը կիսահամոզ եղանակով . . .

(Կայծեր Բ. հատոր , երես 472) : »

Վարդանի եւ Դուզուկչեանի առանձին խօսակցութեան մէջ (Խենթ . երես 188) : Դուզուկչեանը խօսելով Պոլսեցւոց անտարբերութեան վրայ , ի միջի այլ բազմաթիւ տխուր խոստովանութեանց՝ կ'ըսէ . « Չգիտէի՞ք որ այժմեան քաջ քրդերի մեծ մասը , որոնք հայի համար Աստուծոյ պատիժ ու պատուհաս են դարձել , մի յիսուն կամ հարիւր տարի առաջ մեր արիւնակից հղբայրներն էին , մեր լեզուով էին խօսում եւ մեր եկեղեցումն էին աղօթում : »

Պ . Մ . Փորթուքալեանի հրատարակութեանց միոյն , Մ . Ա . ի « Թուրքիայի Հայերն եւ իրենց դրացիները » տիտղոսով տետրակին մէջ , հետեւեալը կը գտնենք .

« Հին Հայաստանի երկրագործ ժողովուրդն է որ այսօր տակաւին կ'երեւի բնիկ հողին վրայ . պատերազմիկ մասը ինչպէս նաեւ վաճառականները ամենէն առաջ ձգեցին երկիրը եւ փախան զանազան երկիրներ ահագին գաղթականութիւններով : Աշուտական ցեղը մասամբ մը բնաջինջ եղաւ Սրարացիներէ եւ Թիւրքերէ որպէսզի երկրին մէջ ապստամբութեան առաջնորդող տարրերն պակսին . մի մասը յունական կայսրներին քով ապաւէն դտաւ եւ մի ուրիշ մասն ալ փութաց մահմետականութիւն ընդունելու խառնուելու Բիւրտերի , Թիւրքերի եւ Պարսիկների հետ , իր անկասութիւն ու կալուածներ պահելու համար : . . . Այսպէս, կարելի է հանդիպել Հայաստանի մէջ քիւրտ ցեղական անունների որոնք մարած հայ նախարարական տան հետքերը կը կրեն : Կորդուաց այն դաւառ՝ ուր Սմբատ սպարապետ կալուածներ ունէր եւ ուր տարաւ իր ալանցի գերիներ, այսօր այնտեղ կայ Ալանի աշիրէթը . աւնոր քով ցրուած են Մամխոռան (այս անունը քիւրտերէն է եւ կը նշանակէ քրիստոնեայների հօրեղբորորդի) քիւրտերը : Մամըկանի ցեղը այն լեռներ կը թափառի այսօրուր երբեմն Մամիկոնեանց բերդերը կը բարձրանային : Տուտերի, ուրիշ քիւրտ ցեղի մը անունն է որ կը նշանակէ երկու եկեղեցիների թեմ . մահմետականացած Հայերի հետքը կը գտնուի Ակնի եւ Օլթիի գաւառներին մէջ : »

Ընդունելով Մ . Ա . ի տեսութիւնները , առանձնապէս Ալըկան կամ Ալան աշիրաթի մասին դիտել տամ, որ նա ունի տեղացիական անուն մըն ալ՝ Ալըկի, որ բոլորովին համապատասխան է Խորենացւոյ սա յիշատակութեանը . « Հրամանաւ Արտաշիսի բնակէ (Սմբատ Սպարապետ) ի Տմորիս , որ այժմ կոչի Կորդրիք , ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերեոյն . . . »

Միեւնոյն վկայութիւնը կայ հայր Սրուանձտեանցի «Գրոց եւ բրոց»ին մէջ , ինչպէս նաեւ Պալըզան ցեղի սա խոստովանութիւնը . « Հայ եմք եղեր, կ'ըսեն, ու մեր ազատութեան համար զէնքը չձգեցինք՝ հաւատքը փոխեցինք : »

Իսկ Մամըկան եւ անոր հետ Բաքըրան ցեղերը դեռ այսօր հայ կարեւոր շրջաններու մէջ առանձին հզարտութեա մը մը կը յայտնեն թէ իրենք Մամիկոնեան եւ Բագրատունեան տոհմերու շառաւիղներն են :

Եւ մէկզի թողով մարդաբանական եւ ցեղային այն բնատիպը, որով այդ աշիրաթը մեծապէս

կը տարբերի միւս աշխրաթներէն, աւելցնեմ որ նա իր վրայ կը կրէ միեւնոյն ժամանակ Ռալանտ մակդիրը • քրդերէն «նաւանտ» բայի բայարմատն է եւ կը նշանակէ փախցուած կամ ուրիշ իմաստով գերուած ժողովուրդ : Եւ եթէ հետագօտելու ըլլանք, ի՞նչ գիտնանք որ Կիւզէլ Տէրէի (Ազնուածոր) շուրջը թափառող Սլոզկան (Կրրեմն ալ Սըլըկան) ցեղը Սլկուհիքի հետ պիտի չնոյնանայ եւ մնացեալ Հասանան, Հայտարան, Պալըզան, Սիբըկան, Ձէլալան, Տըմըլան, Ձիլան իան, Միրանիան, Շիտանան, Ռաչկօտան, Ամրտան, Լեն, Լեն, ցեղերէն շատերը մէկ մէկ հայ կարեւոր տան չպիտի վերագրուին : Թափառիկ հայ աշխրաթի օրինակ չէ որ կը պակասի • այժմ ալ Հայաստանի խուլ անկիւններուն մէջ աշխրաթներ կան, որ թէեւ քրդերէն կը խօսին, բայց հայ են եւ քրիստոնեայ, ունին իրենց քահանան եւ շարժական մատուոր :

Դեռ եւս այսօր մեր կողմեր բազմաթիւ ոչխար ունեցող Հայերու եւ Քրդերու մէջ սու վորութիւն կայ ձմեռուան եղանակին իրենց հօտերը տանիլ հարաւային տաք երկիրները (պառի) արածեցնել եւ գարնան կրկին վերադարձնել : Անգամ մը հօրեղբայրս կ'երթայ մեր հօտին հետ եւ վերադարձին կը հանդիպի քրդական վրանաբնակ հայ աշխրաթի մը : Զուգադիպութեամբ մը (հօրեղբայրս տէրտերի թոռ է) կը հիւրընկալուի տէրտէրի տան մէջ : Յորեկ ըլլալով տղամարդիկ տունը չեն գտնուիր : Երեկոյին երբ մարդիկ կը վերագառնան իրենց գործերէն եւ որսորդութենէն, բոլորն ալ համատարազ եւ զինավառ լինելով, հօրեղբայրս կը դժուարանայ որոշել քահանան, մօրուքը միայն գտնելով քահանայութեան յատկանիշ (մեր կողմերը մօրուք կրելը՝ քահանային եւ շեխին, մղդսիին եւ սօփուն միայն յատուկ է), կը փութայ անոնցմէ մօրուքաւորին մատուցանել պատշաճաւոր յարգանքը՝ աջը համբուրել : Բայց ան թոյլ չի տար ըսելով, «Ձեռքերս այն ժամանակ միայն արժանի են համբուրուելու, երբ եկեղեցական խորհուրդ մը կատարելէն դեռ նոր գուրս կուզան, այնուհետեւ անոնք կը շողախուրն արեան մէջ» : Յետոյ տանուտէր տէրհայրը կը պատմէ իրենց էլին(խուժը) կենցաղավարութիւնը, թէ ինչպէս ունին իրենց «էլ աղասին» որ կը վճռէ իրենց մէջ ծագած վէճերը, թէ ի՞նչպէս իրենց խաղաղութեան համար թշնամի «էլ»երու դէմ ունին դաշնակից քիւրտ աշխրաթներ, Լեն, Լեն : Ատոնք կ'ունենան իբրեւ եկեղեցի առանձին

վրան մը զոր ի հարկին կը բանան պատշաճաւոր տեղ մը եւ իբրեւ սեղան կ'ունենան օծեալ խաչքար մը, զոր կը կանգնեն վրանին արեւելեան կողմը, եւ որու վրայ սուրբ պատարագ կը մատուցանեն :

Դժբաղդարար այս պատմութիւնը տղայութեանս ատեն լսած ըլլալով հօրեղբորմէս, մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ աշխրաթին անունը, մոռցած եմ :

Պ. Կայծոռիկը իր «Տերսիմցիք» ցեղաբանական յօդուածին մէջ (Բանասէր, Ա. տարի, էջ 74), յիշած է Միրաբեան հայ ցեղ մը որ Քիւրտի պէս վրանաբնակ կեանք ունի :

Որքան ալ այս գիտողութիւնները մեր ճաշխարհաքաղաքացիներէն նկատուին որպէս հայրենասիրական անձուկ հայեացներ, այնուհանդերձ քուրդը իր ասպետական ընաւորութեամբ բացայայտ ցոյց կուտայ թէ յառաջ եկած չէ ուղղակի վայրենութեան սաղմէն, այլ ազատութեան մէջ մեծցած ազնուակալութեան մը մնացորդն է, որ չկարողանալով հանդուրժել իր վրայ ծանրացող «բռնութեան լուծին» ազատ լերանց ծոցը նետած է զինքը եւ գոյութեան կռուի համար այնուհետեւ իրեն նշանաբան ընտրած՝ «Բըտա՛ բը դօպալ, հա՛նա ջանաթէ (յենուի՛ր գաւազանի ուժին, դնա՛ արքայութիւն) :

Լեռնական քիւրտը այսպէս նախընտրելով թափառական կեանքը՝ (\*) կորսնցուցած է հայրենիքի որոշ գաղափարը, ատած է հաստատաբնակ կեանքը, խորշած է երկրագործութենէ, որով մշակ դիւղացին ընդունած է իբրեւ ստորկացեալ (բայեա) ստոր հասարակութիւն, իր եւ անոր մէջ բացած է արհամարհական այս խրաւմատը՝ «կու՛նտի նապը ջնաի (զիւղացին ազնուական չի կրնար ըլլալ) : Այստեղ լերանց մէջ իր զբաղումն ընտրած է խաչնարածութիւն եւ այս սահմանափակ ու դժուար կեանքի պատճառով հետզհետէ կորսնցուցած է իր գեղեցիկ ձիրքերէն, բարձրովարճէն մաս մը :

(\*) Լեռնաբնակ քիւրտը այնքան ալ գոհ չէ իր վիճակէն եւ զարմանալին այն է՝ որ ան իր այրօրինակ կենցաղավարութիւնը կ'ընդունի իբրեւ միջին եղանակ լեռնական, դեղջկական եւ քաղաքացիական կենցաղավարութեանց : Ատոր համար ունի այսպիսի աւանդութիւն մը • քիւրտ մը կը վարէ լեռնական, դեղջկական եւ քաղաքացիական երեք տեսակ կեանքերն ալ :

Հովուական կեանքէն մնացած է անոր մէջ, խորարատ, հովուելու բնաւորութիւնը միայն: Երջակայ հաստատարնակներու վրայ տարածած է սեռակ մը աւատական իշխանութիւն, իր պաշտպանեալն է ընդունած զանոնք, կեանքի անհրաժեշտ պիտոյքներու համար տուրք է դրամ անոնց վրայ, անոնց գոյքնու կեանքը իր ստացուածքն է համարած, դնած, ծախած, փոխանակած եւ շատ անգամ, փոխադարձաբար, սրի ու ժով յափշտակած է իր նմանէն, եւ այս ամենը առանց ազգի ու կրօնի խտրութեան, քիւրտին ու Հայուն հաւամարապէս: Ասպետական վեհանձնութեամբ մը այս Աշիրաթնեքը չեն խոնարհած Թուրքի լուծին եւ յարմար առիթներուն ապստամբած են անոր դէմ: Մէկ մասը միայն նուաճուած է, ան ալ՝ մնալով զինավառ, իրեն ապրելու հանդիստ միջոց ընտրած է աւազակութիւնը, ասպատակութիւնը եւ մընացած է շատ անգամ ալ քաջալերուած Թուրք պաշտօնեաներէն: Եստ բնական է որ քրդին այսօրինակ կեանքէն՝ ներկրագործ ժողովրդի, դիւաւորաբար, անզէն անպաշտպան հայու, կեանքի խաղաղութիւնը պիտի վրդովէր եւ պիտի եւթարկուէր կեղեքումներու: Ահամենք այդ կեղեքումներու սակ, չսեանելով մեր բուն ուղղածուծ թշնամին, Թուրքը, որ պատճառ եւ հայր է այս չարեաց, եւ առանց ի նկատի ու-

նենալու ներքին քիւրտը, ճանչցած ենք զայն իբրեւ մեր գոյութեան միակ ցեցը, անոր վրան ենք յարձակուեր, անոր դէմն ենք բողոքած ամէն ժամանակ եւ ամէն տեղ, մինչեւ անգամ եւրոպական դահերու առջեւ:

Եւ սակայն քիւրտը այս չարիքը հասուցած է ու կը հասցնէ յանգէտս, իբրեւ արհեստ, իբրեւ միջոց բարեկեցիկ կեանքի մը, առանց աղքատի կամ ցեղական ներքին թշնամութիւն մը ցոյց տալու հայուն եւ առանց տիրապետելու միտումի: Բաֆֆին նկատած է (Գայծեր. Ա. հտ. էջ 281) «քուրդը պետական փառասիրութիւն չունէր, եւ ոչ հասկանալի էր նորան աշխարհակալութեան տիրապետութիւնը: Նա նայում էր իր նուաճած ժողովրդի վրայ, որպէս այն սարերի խոտերի վրայ, ուր արածուծ էին նրա անասունները. Մէկը—ժողովուրդը—մատակարարում էր իրա՝ քրդի պիտոյքները, միւսը—սարերի խոտերը—ճարակ էին տալիս նրա հօտերին. որպէս վերջինի աճեցնելու եւ մշակելու համար նա հոգ չէր տանում, նոյնպէս եւ ժողովուրդը խնամելու մասին նա չէր մտածում»: Ասկից զատ, քիւրտ ամբօխը Հայու ճակատագրի բարւոքմանը նախանձախնդիր եղած է եւ Հայու ճգանց միահամուռ դիմադիր եղած չէ բնաւ: Ասոր ապացոյցները բազմաթիւ, եւ անուրանալի են: Եթէ քիւրտը Հայու իրական թշնամին ըլլար, ապա Հայաստանի մէկ անկեան դէպքը պէտք էր անմիջական արձագանք գտնէր միւս մասերու մէջ ալ: Մինչդեռ հակառակ Թուրք պաշտօնէից բաղմաթիւ մեքենայութեանց եւ թեւաղրութեանց, երբ Հայաստանի մէկ քաղաքի կամ գաւառի մէջ զարհուրելի ջարդեր տեղի կ'ունենան, մնացեալ մասերու մէջ քիւրտը անշարժ կը մնայ եւ մինչեւ իսկ պաշտպան կը հանդիսանայ Հայուն: Օրինակ՝ երբ Վանի մէջ աղետալի կոտորածը կը սկսի, Մոկաց Պէկը՝ որ հոն կը գտնուի եղեր այն ժամանակ, կայծակի արագութեամբ իր Հայերը պաշտպանել կուտայ եւ յետոյ միւթարական նամակ կը գրէ «Հայոց Հայրիկին», իր վաղեմի ծանօթին, որու հայրենասէր եւ զգայուն սրտին ծանօթ է, եւ կը ջանայ մասամբ ամօքել անոր կսկիծը, սրբել անոր արտասուած այն կաթիլները զոր պիտի հեղուր իր Հայերուն համար, յայտնելով թէ թէ պաշտպանած է զանոնք:

Քիւրտը, սկանառես եւրոպական պետութեանց երբեմնակի միջամտութեանը «հայկական խնդրոյնը» եւ մանաւանդ յիշելով 78

Վերջնոյն մէջ կը հասնի իր օրահասն ու մահուան հրեշտակը կուգայ հոգին առնելու: Մահամերձը կը խնդրէ հրեշտակէն իմանալ՝ թէ ո՞րքան ժամանակ վիճակուած էր իրեն վարել երկրային կեանքը. հրեշտակը կը յայտնէ. վաթսուն տարի, որ լրացեր է այժմ: Այն առտն իրաւախնդիր կը հանդիսանայ եւ կ'ըսէ հրեշտակին. —Իրաւ է, քսան երկար տարիներ հողոված եմ գիւղին մէջ, բայց եթէ այդ ստորկական ու փոթորկալի ժամանակէն զատելու լինիմ երբեմնակի վայելչանքներս, հազիւ երկու տարի դուրս դայ իբրեւ կեանք. քսան տարին ալ անցուցած եմ շնորհներուն մէջ. սակայն եթէ այն անկայուն ու երերուն վիճակէս ալ խաղաղ օրերս հաշուելու լինիմ, տասը տարի միայն կը կազմուի. քսան տարի է որ հոս քաղաքին մէջ կ'ապրիմ անվրդով, այս ժամանակը, այո՛, կրնամ ամբողջապէս կեանք համարիլ: Եւ որովհետեւ «ապրիլը» «կեանք վարել» իմաստով կ'ընդունուի՝ կարծեմ, ուստի ես ապրած եմ դեռ երեսուներկու տարի միայն. մնացեալ ժամանակը՝ չեմ սպասեր որ Արդարադատ ատեանը զլանայ ինձ կամ կորզէ ինձ մէջ: Հրեշտակը կը ներկայացնէ մահամերձին հաշիւը. Երկնից գահուն, ուրկէ արդարացի գտնուելով՝ մահամերձը կը շարունակէ լրացնել իր ճակատագիրը:

Թուականի Ռուսաց բանակի մուտքն ի Հայաստան, ապագայ «անկախ հայութեան մասին այնպիսի խոր համոզում մը եւ ջերմ հաւատք մը կազմած է որպիսի հաւատով թերեւս մենք իսկ չենք ձեռնարկած հասնելու անոր: Մըտերմական խօսակցութեանց մէջ յաճախ մը խիթարական խօսքերով կ'ըսէ Հայուն. «Քրիստոսնեայ տէրութիւնները, մանաւանդ քրիստի Ռուսը (քիւրտը հայուն քրիստի կը ճանչնայ Ռուսը), որու զօրքի մեծ մասը ձեր եղբայրներն են (քրդի կարծիքն է այս), ձեզ չպիտի թողնեն այս դերութեան մէջ, մէկ կամ միւս օր անպատճառ պիտի ազատեն ձեզ»: Ապա անառակ որդու դառնազեղչ շեշտով մը կը յաւելու. «Մենք յոյս ունինք որ զուք՝ մոռցած մեր մէկ քանի սրիկաներու գործերը՝ մեզ ալ այն ժամանակ փոքրիկ պաշտօններ կուտաք»: Քիւրտը ղինքը բաղդակից ալ կը համարի հայուն: Իր մասին կ'ըսէ՝ «Թիւրքը օտար է, հակառակ պարագայի մը կրնայ քաշուիլ այնտեղ ուրկէ եկած էր, իսկ մենք մեր աչքերը ձեր մէջն ենք բացեր եւ ձեզմով ապրեր, ձեզմէ ու ձեր երկ-

րէն զատ (քիւրտը Հայաստանը իր երկիրը չի համարիր) ուրիշ տեղ չունինք. ուզենք չուզենք, ձեր պոչին կպած պիտի մնանք»: Արդեօք Րաֆֆին՝ Քիւրտի այս խօսքերը, այս համոզումը լսելով չէ՞ որ իր «Սենթ»ին քաղցր երազին մէջ քիւրտը հայու հետ ձուլուած կը տեսնէ:

Չնայած համիւլամութեան դաղափարին, քիւրտը՝ իր եւ Թուրքի մէջ կը դնէ ատելութեան այնպիսի վրի մը, որու նշանախեցն անգամ չի նշմարուիր քիւրտի եւ հայու միջեւ: Ամէն գաւառացու ծանօթ է քրդի այն զայրոյթը, այն նախատինքը, որ կը հեղու իր լացող կայ՝ անառակ որդու վրայ՝ բացագանչելով «կուսո՛, կուսո՛», ու է դիւ պիւի Ռօմ, չի՞ ըշտահաթ (տղա՛յ, տղա՛յ, տաճկցա՛ր, ի՞նչ պատահեցաւ քեզ: Քիւրտը կը բնորոյէ թիւրքը զալըմ, պէբաղղ ու պէգարար (բոնակալ, երախտամուաց եւ խոստմնազանց) բառերով:

ԼՕՇՏԱԿ

(Շարունակելի)

